

“Droschak”
ORGANE
de la F. R. A. D.

ԴՐՕՇԿԿ

Rédaction du Journal
Droschak
PARIS (FRANCE)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

«ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ»

Արդա՛ր էր որ Դաշնակցութիւնն ալ ռւսներէն, վերջապէս, իր Օրը, իր փառքը երգելու, ինքն իր մով հպարտանալու համար:

Նոյն իսկ շատ ուշ ենք մնացած:

Տարեկարծներ շատ ունինք.— կուի յիշատակներ, սուգի օրեր, թուականներ որոնք ընդունակ են ամբողջ սերունդներ ներշնչելու: Բայց անոնք բոլորը իրենց տեղն ունին և պիտի յիշուին ու պահուին առանձին, իբրև թանկագին աւանդներ: Մնաց որ, անոնք անգամ պատահաբար կը տօնուին, և կիսկատար, կապուած ըլլալով ժամանակի պահանջներուն և տեղական պայմաններուն: Ուժերու յարաճուն, յարասեւ լարուժը, մեր պատմութեան թաւալլոր ընթացքը թոյլ չեն տուած կանոնադրել հաստատուն, պարտաւորիչ ձեւեր:

Տքնաշան պրպտումներ, հերոսական սլացք, պուտ մը ժպիտ, յետոյ անասելի ցնցումներ. կարճ դադար մը վերակազմուելու համար և նորէն շնչաւառ, աննկուն վազք մը դէպի նպատակը.— ահա, քանի մը բառով, այն կեանքը որ կը յատկանշէ Հ. Յ. Դաշնակցութիւնը: Այսպիսի կացութեան մը մէջ, ի հարկէ դժուար էր հետեւել ո՛ր և է կանոնի:

Եւ ճիշդ ստոր համար, Դաշնակցութիւնը չկրցաւ լրիւ տօնել ոչ իր քսանընթիւնգամակը, ոչ ալ երեսնամակը, հակառակ հանդիսաւոր որոշումներու:

Եւ դեռ աւելին,— չկրցաւ նոյն իսկ ամփոփ ձեռնարկ մը հրատարակել իր գործունէութեան մասին, իբրև համառոտ գիտելիք, « ի պէտս զարգացելոց »: Այս տեսակէտով, Դաշնակցութեան պատմութիւնը շատ կը նմանի հայ ժողովուրդի պատմութեան: Ինչպէս ինքը, ժողովուրդը, անդու՛կ կը աքնէր ու կը հեւար օրուան պահանջներու և տանջանքներու ծանրութեան տակ, սպասելով որոշ հանգրուանի մը, որ միշտ կը խուսափէր, Դաշնակցութիւնն ալ, իբրև անոր սրտէն բխած մասնիկ մը, յորձանքին ափր կանգնած, կը թաւալէր անոր ելեւէջներով:

Նորութիւն մըն է այս մէկը, «Դաշնակցութեան Օր»ը, որ տօնուեցաւ ամէն տեղ, և միեւնոյն զգացումներով, իբրև համադրական խորհրդանշանը՝ մեր մաքառումներուն և առջադրութեանց:

Պարագանները աւելի նպաստաւոր են այսօր: Ոչ: Այսօր աւելի քան երբեք մոռլ է հորիզոնը և դժնդակ՝ իրականութիւնը: Իր նախնիթացը չունի հայ ժողովուրդին այսօրուան պատմութիւնը: Բազմածալ, բայց քրքրուած, բզբտուած զիրքի մը էջերուն պէս, այդ պատմութիւնը փոուեր է մեր աչքերուն առջև, իր ամբողջ ողբերգութեամբ: Էջեր կան որ կոխտուուեր, այլանդակուեր են, ուրիշներ— մեծ մասը — փոթորիկէն քուուեր, տարադուուեր են եօթը ծոփերու վրայ: Շատերուն՝ աշնան տերեւներու ճակատադիրը կը սպանայ: Բայց, ընդհանրապէս, անվթար կը մնայ զիրքը, կը բուէ որ մենք ունենանք համապատասխան կորոզիւ ու աշխատանքը, զայն հաւաքելու և վերակազմելու ուրիշ խօսքով, անոր վերջնական կորուստը կանխելու:

Արդ, անոնք որ Դաշնակցութեան Օրը տօնեցին այս տարի, և պիտի տօնեն ամէն տարի, Հոկտեմբեր 1ին, առաւելապէս այդ մտահոգութեամբ առաջնորդուած էին: Որովհետեւ, ի՞նչ կը նշանակէ ինքն իր մէջ հպարտանալ, երգել ու պանծացնել իր երէկը, եթէ այդ տօնակատարութիւնը չպիտի ծառայէ թափ թալու վազուան գործունէութեան, կրկնելու իր ուխտը՝ մեռելներուն և ողջերուն անունով: Տեսակ մը հոգեկան հաղորդութիւն էր այս տօնը, — առանց պաշտօնական ձեւերու, բոլորովին ինքնաբեր և Ֆ ա մ ա դ ա շ ն ս կ ց ա կ ա ն, Եւ իբր այդ, արժարձեց միևնոյն ոգին, Փարիզի թէ Երեւանի մէջ, Պերլինէն մինչև Պաղտատ կամ Պուէնոս Այրէս, ամէն ո՛ւր որ բոյն դրած է հայկական համախմբում մը, և անոր կողքին, անոր ծոցին մէջ՝ դաշնակցական կորիզ մը:

**

Ուրիշներ, աւելի նորեր, իրենց պետական — վարչական բովանդակ ուժը շարժման մէջ դրած են, զանազան «Օր»եր հռչակելու և պարտադրելու համար: Դաշնակցութիւնը, իր իշխանութեան

օրովն իսկ չփորձեց այդպիսի ձև: Ու եթէ այսօր իր շունչով կը վարակէ այնքան բազմութիւններ, ու խանդավառութիւն կը յարուցանէ այս հանդիսաւոր վայրկեանին, այդ կը պարտի ոչ երէկուան իշխանութեան, ոչ արհեստական փողատարութեանց: Այդ հմայքին ամբողջ դատարանը կը բխի իր իսկ էութենէն, ու իր պատմութենէն, անհաս և անիմաստի: Ամբողջ իտրոնորդ մը կը ծփայ այդ պատմութեան մէջ, սկզբնական օրերէն մինչև մեր ժամանակները, և այնքան հարգատ է այդ խորհուրդը, ու այնքան մարդկային, որ կրցէր է դիմանալ վիթխարի վերիվայրումներու, ինչպէս և բոլոր սարսափներուն և անակնկալներուն:

Գաշնակցութիւնը սասպարէն: Նա արթնցնելու կարգ մը առաքինութիւններ որ թմբած էին դարաւոր ստրկութեան հետեանցով, ու միևնոյն ատեն ներարկեց ոգի մը որ ամենէն ամբողջ երաշխիքն է ո՛ր և է ժողովուրդի վերածնութեան համար: Ան չգործացաւ «միտքեր բանալով», այլ և, գիտցաւ շարժման մէջ դնել բազուկները, ոչ թէ արիւն թափելու, այլ հարուածին հարուածով պատասխանելու: Եւ այս ամբողջ վրայ, գարձաւ ամփնէն հզօր ազգակը, երեսաւորացիներ համար հայ ժողովուրդը: Գունդազունը ողջակէզ գնաց ամբողջ սերունդ մը, արտերու վրայ և դաշտերու մէջ, յաճախ եղունգներն ու ակունքները գործածելով սուրի և փամփուշտի տեղ: Մարդկային գրիչը անգործ է պատկերացնելու այն փարհուրեղի մենամարտը զոր միջինն մեր հերոսները, ուրիշ նոյնքան արի ռազմիկներու հետ, ապա հովելու համար մեր ապրելու իրաւունքը:

Եւ այսօր, երբ յուզմանով կը խնայարհինք անոնց նշխարներուն առջև, յսփշտակութեամբ պատմելով անոնց գործերը, խորասպէս կը գազնք թէ բարեկամ և թշնամի, հայ ժողովուրդը հաշոյի առնել սկսան շնորհիւ անոնց դիւցազնամարտին, անոնց մտքի յոյսին և բազուկի ուժին: Մինչև արատազրական շարժումները, աշխարհը մեր վրայ կը նայէր իբրև «բանաւոր հօտ» մը, որ կը շարձարուէր իբրև բարի քրիստոնեայ, որուն կը մեղքնային ինչպէս հասարակ թշուառի մը: Այսօր քաղաքական, իրական արժէք մըն է րայաներու բազմութիւնը, — ինչպէս կը կոչէին արհամարհանքով — ու թէ և պարտաւած, ունի կուտան մը — իր իսկ ստեղծագործութիւնը, — և կամք ու հաւատք՝ լեռներ գլորելու: Այլ և ո՛չ մէկ ուժ կրնայ կասեցնել ընթացքը մեր նորագոյն, արհեստազանգ պատմութեան, որ ուղ—կանուկ պիտի յանգի իր ճակատագրական վարձանին, — հայ ժողովուրդի վերջնական ազատութեան, իր սեփական հայրենիքին մէջ:

Հոկտեմբերի Մէկը խտաբունն է այն բոլոր նշանախօսքերուն, որ շարժման մէջ գրին հայ ժողովուրդին մտաւոր և մարտական ուժերը և ստեղծագործ առաքինութիւնները, թօթուելու համար ամէն լուծ: Այդ այն օրն է երբ ճակատ—ճակատ անողորմ և անհաննջ կռիւ յայտարարուեցաւ ապա կամքի բռնութեան, դէմ: Եւ իբրև այդ, պիտի տեսէ և պիտի ներշնչէ, գոտեպնդէ և ապրեցնէ, քանի կը տիրէ բռնութիւնը մեր կապոյտ երկնքին տակ, մեր մինուճար ժողովուրդի գլխուն, օտարներու թէ հարգատներու կողմէ:

3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

եւ
ՍՕՅԱՒԱՒՍՏ-ՅԵՆՒՎՓՈՒԱԿԱՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ*)

(Մի էջ իմ յուշերից)

Հայ ժողովրդի յեղափոխական շարժումին եւ ծանօթացելով եմ դեռ վաղ պատմականութեան օրերն՝ Համարեա երեսուն տարի առաջ, 1885 թ. Պետրոպոլսի վրայ բանակից զորք գալով՝ եւ մի քանի տարի ապրեցի ռուսիականութեան Հակադիմութեան տակ, ճամբով քաղսրում, ուր «յատուկ Հակադիմութեան տակ» էր ընկել հաս այն ժամանակահատուկ Նարագովից և ապագայ էսէր ընկ. Լաւրուսելը: Նրան մեղադրում էին Հայ յեղափոխականների Համար Գովառ դէնք փոխադրելու մէջ, որ նա գաղտնի կեցալով ձեռք էր բերում պետական զինագործարաններից: Յիշում եմ, թէ այն ժամանակայ մեր տամբովի երիտասարդ մարկիստներն ինչպէս էին կշտամբում նրան, որ իսրել է ինչ որ «սոյ մերս» «օտար», բարբոսի ոչ սոցիալիստական գործի մէջ: Մինչև այժմ յիշում եմ. պատասխանելով նրանց, թէ ինչ ոգեւորութեամբ էր խօսում նա Հայ յեղափոխականների ժողովրդի կեանքի և պատիւի Համար մղած իրենց անհաւատար Հերոսական պայքարի և, մանաւանդ, ուսու կառավարութեան այս պայքարում ունեցած պրոֆօկացիան դերի մասին, որը թէ՛ իրեն ներկայացնում էր թլրաբերից Հարստահարած Հայաստանի և թէ միաժամանակ արդէնք Հայաստանում ամէն մի բարեկորուցութեան, որ կարող էր առ Հայաստանին անդրբոլսութիւն: Պարզ էր. ուսու ինքնակալութեանը Հաւատարակեալ Հարկաւոր էին և՛ Հայերի պայքարը իրենց անկախութեան Համար, և Հայաստանի յաւատեւ Հարստահարելը, որպէսզի չցամաքին «Հիւսնոզ մարդու» գործերին միջամտելու տալիքներ և որ ուսու ցարդիմը Հայաստանում միշտ կարողանայ ունենալ վառօղի պահեստ, որը կարելի վրին պարզեցնել միտքբերօղի վրա յաջող յարձակում գործելու համար: Արդէն արտասանած էին ուսու դիւանագետի անմոռանալի շնական խօսքերը. «Այո՛, Հայաստանը մեզ պէտք է, բայց միայն... առանց Հայերի»: Այսպիսի Հանգամանքներում, առաւ էինք մենք — եւ և Լաւրուսելը — ուսու յեղափոխականների պատիւ գործն է և սրբազան պարտականութիւնը քաւել ինքնակալութեան մեղքերը Հայ ժողովրդի Հանդէպ. Հայ ժողովրդի գործը մեր Հարազատ գործն է, և ո՛չ միայն նրա համար, որ բոլոր ժողովուրդները եղբայրներ են, այլ և այն պատճառով, որ միայն Հայ ժողովուրդին ցոյց տաւ անձնագոչ յեղափոխական օգնութեամբ ուսու դէմօղբութեան կարող է ջնջել ինքնակալութեան դարձելի քաղաքականութեան կողմից Ռուսաստանին քսած արատը:

Այն ժամանակ Հայկական Հարցը, իբրև քաղաքական կեանքի գործնական մի խնդիր, ինձ տակաւին բաւական աղօտ էր պատկերանում: Երբ մենք խօսում ու կատարի վիճում էինք նրա մասին, աւհանարակ խօսում էինք մեր

*) Ռուս սոցիալիստ—յեղափոխական կուսակցութեան ակաւաւոր տեսաբան և Ռուսաստանի Սահմանադիր ժողովի նախագահ ընկ. Վ. Չերնովի այս յօդաւոր գրում է յատկապէս «Դրօշակ»ի Համար Խմբ.

աշխարհահայտնային ամենաընդհանուր սկզբունքների մասին. մենք նույնում էինք նրան եթէ ոչ բացառապէս, զէթ զերս-զանցօրէն բարոյական տեսակէտքի նա հայկական խնդրի բովանդակ բարոյութեանը մտտիկ կերպով ծանօթանալու առիթ ունեցայ շատ աւելի ուշ, արտասահմանում: Այնտեղ եւ հանդիպեցի և, իմ բոլոր մտտիկ բարեկամներէ պէս, շատ ջուռով մտերմացայ Քրիստոսփոք Միքայէլեանի, այն ժամանակէն առձեռք ժողովրդական Հայաստանի «մեր Քրիստոսփորն» հետ:

Հաստիկ տարբերութիւնը մեր միջև մեծ էր, մտ տասնև-հինգ տարի: 1900 է, աւելի ուշ, 1904 թականներին, երբ մենք տեսնուեմ էինք իրար հետ (այս երկու թականների մէջ նա կարողացաւ գաղտնի կերպով անցնել Կովկաս), նա արդէն յիսուսի մտտիկ մարզ էր: Նրա սովորն խաղաղ դէմքը շրջապատու էր խիստ արժաւքին .տուղ մօրուցով: Ունէր փիւրկոն առողջութիւն: Եւ թւում էր համակ ողորդութիւն Արարում և շնչատում էր, ըստ երեսուցի, նեարդրով: Կամքի բարձրագոյն լարումը նրա մէջ յարթահարում էր յոգնածութեանը. Եւ յամաք թւում էր, որ նրա հողին մարմնի հետ կապած է խիստ նուրբ թելերով, և վախ էր ծագում՝ չլինէ, չանկարծ, այդ կապը կտուի: Այդ տպաւորութիւնն ու միակցում էր և նրանով, որ նա երբեմն կարծես բացակայում էր հողով և չէր տեսնուէր. ու չէր լսում շրջապատը և քաշում էր խորը-խորը իր մէջ, իր սեփական էութեան ինչ որ անչայտ ոլորտները: Գծար էր նրա պտտիկի հետ զուգորդել նկարագիրը մարտիկ - ահաբեկի այնպիսի խմբերի, որոնք միշտ պատրաստ են սկսելու զինուած կռիւ պահանջած վայրում և հանգամանքներէ թելադրած իւրաքանչիւր վայրկեանին: Այդ բանի համար նա, կարծես, շատ էր միով, նայն իսկ իւրայատուկ կերպով հեղ-զարտիկներին մէջը նրանից բզկտոջ հմայքի, որին զուար էր շնթարկել նոյնիսկ ամենից քիչ ենթակուց մարդու համար:

Իմ վրա Միքայէլեանը թողնում էր բնածին, «կամօքն Աստուծոյ» անեղծած պարագլխի տպաւորութիւնը, այնպէս, ինչպիսի տպաւորութիւն — ազգային նկարագրի ամբողջ տարբերութեամբ հանդերձ — թողնում էր հանգուցեակ Գէրջու-նին: Նայն մեծագոյն հաւասարակշռութիւնը, ներքին խորացումն ու կեդրոնացումը: Միեւնոյն զգայուն, իմացական ուղի-մտութիւնը, Առօրեայ մանր խնդիրներէ, գործերէ ու հարցերէ մէջ, գիտնելով «սև աշխատարտ» պէս մտնել բոլոր մանր-մունր հարցերի ու մանրամասնութիւնների խորքը, երբեմն նա թւում էր նեարդր շունեցող մէկը — այնքան համբերութեամբ, առանց յուզելու և տաքանալու, մեղմութեամբ ուղղում էր ուղիները վրկաւմներն ու սխալները: Ինչդրը լուծում էր. բոլոր խնդր մազգայնից պէս, Միքայէլեանը գիտէր նայել մանր բաների վրայից և երբեք չէր կորցնում համաշխարհեան զգացումը, թէև գործի յաշտութեան համար անհրաժեշտ եղած մանր բաներից և ոչ մէկը նրա համար այնքան մանր չէր, որ չաշխատէր պարզել ու յղկել: Մասնաւորապէս խիստ զարգացած էր նրա մէջ իմացական խիղճը՝ միշտ անհասկոտ, միշտ համակած վախով, որ չլինէ թէ ուշադրութիւնից վրկալի որ և է բան շարժման լայն հորիզոններէ, որոնք դժարութեամբ են ընդհմարում ապագայի մշուշի մէջ:

Միքայէլեանի հետ հշտ էր հասկացել հենց կէս-խոսքից: Այս խնդրում շատ նշանակութիւն ունէր և այն, ոչ մենք երկուսս էլ անցել էինք միեւնոյն գաղափարական դար-բոցը: Վաղ պատանեկութեան օրերին, սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան հիմնադրութիւնից ժամ տասնեակ տարիներ առաջ, ես հարչում ու կրչում էի ինձ նարթօ. վոյեյ: Իսկ Միքայէլեանի գաղափարական դիմագիծը կոփել էր այն խմբակում, որ 1880 թ. կազմել էր Թիֆլիսում նարթօյօվեց Քարօզելի կողմից: Թմակը իր կազմով բազմազան էր և բնոյթով՝ մի քիչ տախարհադադաքալի Միքայէլեանը չլուխեցաւ ընկերները շատերի աչքին դառնալ հերետիկոս: Նա անօրինակ նախատեսութեամբ դրեց այն հարցը, թէ սկստք չէ արդեօք ժամանակակից հասարակակարգի ընդհանրական պայմանների վերաբանատեսական քննադատութեան հետ միտնի մտանալ աւելի սերտ կերպով իւրաքանչիւր առանձին ժողովրդի կեանքի կենդրէտ պայմաններին և, այդ պայմանների համեմատ, ստեղծել առանձին ազգային կազմակերպութիւններ, որոնք միայն ի վիճակի կը լինեն թափանցելու հարազատ դանդաճների մէջ — ի հարկէ, միաժամանակ իր բոլոր ուժի մէջ պահելով նաև բոլոր ժողովուրդների համարաշխտութեան սկզբունքը: Սկզբնական շրջանում այդ եղաւ ճձայն բարբառոյ յանապատին: Բոլոր խնդր մարդկանց պէս Միքայէլեանը իր ժամանակից առաջ էր ճնշել: Նա գիտէր ինքնորոշել կերպով մտածել և իր մաջով հարթել նոր ուղիներ: Անցան տարիներ և պարզ դարձաւ ամենքին, մտեանանդ նարթօյանա Վօլոյտի ինքնակալութեան հետ ունեցած մեղմարտի եղբակական վարձանից յետոյ, որ եթէ յեղափոխական մտաւորականութիւնը չի ուղղում մնալ կէտ. բւած հողից ու կախան օդի մէջ, պարտական է ամաւր ուրջով կանգնել սեփական ժողովրդի որոշյն գետնի վրտ, պարտաւոր է գիտնալ ընկերվարութեան և յեղափոխութեան ընդհանրական գաղափարների բովանդակաթիւնը մարմնացնել լեզուի, ազգային հոգեբանութեան և մշակոյթի ազգային ձևերի մէջ: Հայաստանի համար այդ բանը արտայայտեց — Քարօզէլի խմբակի կազմութիւնից առաջ տարի յետոյ — Հ. Յ. Գաշնակցութեան ստեղծումով:

Միքայէլեանի անցած նարթօյօվեան դպրոցը մշտընջենական դրոշմ էր դրել նրա հոգեկան բովանդակ կազմածքի վրտ: Ինչպէս ինքն է ասել. «Նարթօյանա Վօլոյտի կուսակցութիւնը, որ այն ժամանակ իշխում էր Կովկասան երիտասարդութեան բոլոր զգայուն ու գիտակից տարրերի մտքերին, մեղակ էր, որ որոշում էր այդ երիտասարդութեան գաղափարների բնոյթը: Միջազգային ընկերվարութիւն, որ պահանջում էր անձնագոյն և անվերադարձ պայքար ընդդէմ կեանքի հնացած ձևերի — ահա այդ գաղափարը»:

Եւ, նայելով օրայն դէպքերի վերելից, Միքայէլեանը հայկական շարժման մէջ տեսնում էր երկու հիմնական հա-կատութիւն: Նա կատարելապէս հաշիւ էր տալիս իրեն, թէ որքան հեռու է այդ գաղափարը առօրեայ դաժան իրակա-նութիւնից, թէ այնքան նախնական է այն մշակութային — ընկերային միջավայրը, որի մէջ հայ յեղափոխականը պէտք է հանդիսանար ընկերվարական գաղափարի ջահակիրը: Այդ միջավայրի հրատապ հարցերը այնքան պարզ էին և այնպէս

տարրական նախքան որ և է ընկերվորութիւն՝ զեռ նրանից շատ առաջ, պէտք է գործ ունենայ մի ամենապարզ հարցի՝ հայ ժողովրդի լինել-չլինելու հետ: Այնտեղ, ուր ամբողջ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնն է հարաւածի տակ գտնուում, ուր նրա զինի կախած է գտնուածային կոտորածներին, շարքերին, կտանց բռնադատութեան, բնակարաններին հրդեհումը և ազգաբնակչութեան անհոյս խողովորման զամոհեան սուրբ, դժուար է յիշել ընկերվորութիւնը, այնտեղ շատ հշտ է մտնուող նրան, մտածել նրա մասին, իրեւ պերճանքի մի առարկայի, որը պէտք է թողնել ուրիշ բախտաւորներին, պատմութեան սիրտուն զուակներին: Այնտեղ մեծ է փորձութիւնը իր բովանդակ զիտացողութիւնը լիցնելու համազգային ինչդիմելով. որի համար չկայ բուրժուառ ու բանաւոր, արեւական ու ուսմիկ, զիւզակի վաղաբուռն և նրա որոգոյթներին մէջ խճճած զիւրացի — կայ միեւնոյն լիզւով խօսող և միեւնոյն արտաքին վտանգի սպառնալիքի ենթակայ մարդկանց մի համբարաշխ դանգաւած, որը պէտք է համախմբել ի մի անբաժան ու գրանիտի պէս ամուր միութեան մէջ, մի դանգաւած, որը չի կորելի թոյլ տալ, որ պատակուի դասակարգային հակասութիւններով — այդ հակասութիւնները կարող են համբերել, նրանց կարելի է յետաձգել մինչև անելի բախտաւոր ժամանակներ... Իսկ եթէ այս այսպէս է, ապա ընկերվորական դրօշակը կարելի է ծաղել և պահել գրգանում. «Հանգչիր, սիրելի աճիւն, մինչև ուրախաբեր աւաւտօր»:

Միքայէլեանը զգում էր շատ լաւ շարժման գաղափարական աղքատացման վտանգը, եթէ նա վերածի Հայաստանի ժողովրդի սեղաշին գոյութեան համար մղւած պայքարի այսպիսի մի նոր պլանօրիմի: Հայ ժողովրդի ապագան նրա համար դատարկ հնչիւն չէր միայն ան ժամանակ, երբ այդ կեանքը ներկայանում էր, որպէս ընկերվորական ապագայ, իսկ բոլոր նախնական խնդիրներին լուծումը, որպէս ուղիղութեան, որոնք նշում են այն միասնական ճանապարհի հանգրւանները: Նա իրեն համար յոտակ կերպով ձեւակերպել երկու դրութիւն: Առաջինը. հայ յեղափոխական ընկերվորականների նպատակներ անհամեմատ անելի ըսյն են, քան աշխատաւոր բնակչութեան բոլոր դատակարգային նպատակները: Երկրորդ. այս ընթացակից և նախնական նպատակների լայնութիւնը չպէտք է լինի ի վրատ բուն ընկերվորական նպատակների խորութեան: Յետեւ համազգային նպատակների կարելի է և պէտք է համախմբել իր շուրջը ամբողջողներին, ձեռնամերձ, մտքով խառնելով, իսկական մարդկային գոյութեան համար հազիւ արթնացողներին լայն գանգաւածները: Բայց այդ ծայրահեղի ներք պէտք է հասնել համոզուած, գիտակից ընկերվորական գործնկարգակերպութեան մէջ կոփւած տարբերի ղեկավարի կողմը: Եւ ծայրամասերն ու կեղտոնի միջև պահել միշտ այնպիսի համաշխարհային, որ շարժումը չկործարի կողմ տարբերքի, որ նրա յուր ջրերին ալիքները չձայնարկի ղեկավար տարբերի ղեկի վրային և չունչացնեն նրա հոգւով կամքը մտցնելու նրան ուղիղ հուճի մէջ, որով հայ ժողովրդի կեանքի գետը չկորչի փխրուն աւազների կամ բոլոր կողմերից փակուած աւազանի կանգուն ջրերի մէջ, այլ լայն գետաբերանով կը միանայ ովկիանոսի մեծ, արեգեքական անասհմանութեան — միջազգային ընկերվորութեան:

Եւ միւս հակասութիւնն էլ ոչ պակաս լրութեամբ և խորը կիրառով զգացում էր նրա կողմից — մի հակասութիւն, որ սկիզբ էր առնում հայ ժողովրդի կենդանի մարմնի երկու՝ ուսուսհայ և թրքահայ մասերի բաժանուած լինելուց: Որքան և ուժեղ էր միութեան ձգտումը, որքան էլ երկու մասերը բարոյապէս ձուլուած լինէին, նրանց կենցաղական, մշակութային և տնտեսական աղբիւրակերպը աստիճանաբար հեռացել էին այնպէս շուտ, որ շարժման գործիակերպը այստեղ ու այնտեղ չէին ծածկում միմիայն: Առանձին, ուրոյն ճանապարհներով էր պէտք լինում քայլել այստեղ ու այնտեղ: Փաստական երկութիւնը յոյ էր և հոգեբանական ճիշտաբաններով: Պետական սահմանի այն կողմը գտնուող նոր հրդեհներին տէր մարդկանց աչքին անպէտք ու անելորդ էր թւում շատը այն բաներից, որ արւում էր այս կողմում, և ընդհակառակը: Ծարժման ղեկավարներին գործն էր գտնել ոչ թէ հատ ու կտոր և մերժեցական միացում սրա ու նրա, այլ իրական համադրութիւն, որի մէջ ահապի դեր խաղար չափի զգացումն ու համաշխարհական հոտառութիւնը: Միքայէլեանը առանձնապէս անհանգիստ և ուշադիր կերպով հետեւում էր շարժման այս երկու հակասութիւնների զարգացման՝ զիտակցելով, որ դրանք, ըստ էութեան, միեւնոյն չէին՝ նախկին հակասութեան տարբեր կողմերը կամ արապայտուութիւններն են լոկ: Յիրաւի, Հայաստանի թրքական կողմը նոյնքան անխնայափէլի կերպով մղում էր առաջին գծի վրա շարժման համազգային խնդիրը, որքան ուսուսական կողմը՝ նրա ընկերվորական միջուկը: Զուտ էր, քան ամբողջովին և պարզամտութեամբ յանձնել այդ հոտանքներից մէկին և յանգել նրանց բաղժման: Այդ բաղժումից ամենից շատ էր վախենում «մեր Գրիտոսափորը» և ամեն զեղով աշխատում էր առաջն առնել: Նա չապրեց մինչև այն ժամանակները, երբ կամ յանձնի «գրիտոսներին» խռովութեան, կամ՝ «անշխատականների» բաժանման, բռուն և անդուպ կերպով խանգարեց դժարութեամբ պահպանող հաւասարակութիւնը: Բայց նա նախազգում էր այդ, վախենում էր նրանից, որովհետեւ զանազան միտումների «սկիզբներն ու վախճանները» նրա ուղեղում միանում էին սրամարտական այնպիսի օղակներով, որոնք նկատելի էին ոչ ամենքին: Այսպէս, յիշում էր, թէ ինչպիսի բարեխոս հումորով երբեմն պատմում էր Գրիտոսափորը շարժման վէթերաններից շատերին, հին մարտիկների, առասպելական քաջազորութեանց հերոսների մասին, որ ընկերվորութիւն էին «ընդունում» միայն հաւատարիմ ընկերվորական գաղափարաբանութեամբ համակած ղեկավարներին, բայց որոնց համար այդ գաղափարաբանութիւնը բարդ և դժուար հասկանալի հերթափոխներ էին, — լսակ միւս կողմից պատմում էր երիտասարդութեան մասին, որը պատրաստ էր պաշտել այդ հին մարտիկներին, բայց վախենում էր նրանց պարտաստակութիւնից խմբական խնդիրներին: Եւ նրանց պարտաստակութիւնը խմբական խնդիրներին մէթոտով առաջ բերել այնպիսի դէպքեր, որոնց բոլոր հետեւանքները դժուար է հաշի առնել և անելի դժուար է հակադրել հարւում ու կըւում գործելակերպով...

Միքայէլեանը հասկանում էր բարդ հոգեբանութիւնը երիտասարդութեան, որը կամենում էր յետ ջննալ և ո՛չ մի

քաջ մուսաստանի ընդհանուր ընկերվարական շարժումից և միշտ մտածել ու խօսել յարաձուռ զարգացող միջազգային ընկերվարութեան լեզուով: Եւ միեւնոյն ժամանակ ըստ ամենայնի գնահատում էր աւելի սարբական հոգեբանութիւն ունեցող մարտիկները երախտիբը: Ձէ որ հէնց իր աչքերի առաջ հայ ազգաբնակութիւնը կարծես վերածուել էր Ռեթնանական թւականները կէսին, ցարական կառավարութիւնը՝ անհանգըւտացած հայութեան ազգային զարթոնքից, դրչել մի հարածով, փողոց շարտեց մտա 20 հազար հայ աշակերտներ՝ հրտարակերով բոլոր հայ դպրոցները փակման հրամանը: Հայ ազգաբնակութիւնը ահաբեկ՝ դիտում էր, թէ ինչպէս արցունքը աչքերին՝ ուսուցիչները հրածեալ էին տալիս իրենց սաներին, թէ ինչպէս երեխաները, խուճապով և առանց մի բան ըմբռնելու թողնում հեռանում էին իրենց դպրոցական ևստարաններից, թէ ինչպէս տասնեակ տարիների ընթացքում, արին—քրտինքով դպրոցներ հիմնող ճնողներ տեսնում էին իրենց գաղափարների խորտակումը և պետական կիբները դպրոցական մեռած շէնքերի դռները վրա: Այս ստրկական անկարեկցութիւնը, այս չափազանց հուռ համարտարութիւնը թունաւորում էին երա հոգիի կակճալի թախծով և ճնշւած վրդովումով: Քառորդ զար յետոյ, ցարական բռնապետութեան նման մի փորձ՝ իր ծանր ձեռքը գնելու ազգային—կեդեցական—դպրոցական ստացւածքների վրա, հանկուխեց համաժողովրդական հուժկու շարժման, իր համերաշխութեամբ ու յամուսնեամբ ամենքին սալշեցնող դիմադրութեան: Իսկ Միքայէլեանի հիմնած կուսակցութիւնը վերածուել էր մի տեսակ երկրորդ, զգալուն կառավարութեան, որին աւելի և աւելի էր դիմում ազգաբնակչութիւնը ներքին, ստացւածքային և նոյն իսկ ընտանեկան դրծերի համար բոլորի կեթարկելով ցարական իշխանութիւնը, ցարական դատարանն ու հիմնարկութիւնները: Խաղաղ, երկչոտ հայ հողադործը, քաղցրեցին, առևտրականը դարձել էին քաղաքային և իրենց իրաւունքների համար պայքարող մարտիկներ: «Նոյնը կը լինի և ձեր ոռու մուտիկի հետ, որի անսահման համբերատարութիւնը առածի կարգ է անցըր»,— ասում էր Միքայէլեանը:— «ժողովուրդը սովորում է ոչ թէ բռնելով, այլ անձնական փորձից: Ձեր ահաբեկչական պայքարը այդ խըղբում կը կատարէ նոյն դերը, ինչ որ մեզ մտա՝ հայտուկային խմբերի գործունեութիւնը Թրքահայաստանում: Ես կորով կը ներշնչէ ժողովրդի մէջ և հասարակ մարդուն կը վարակէ մարտական ոգով: Զանգւածային հերոսութեան ճանապարհը ընկած է անհատական հերոսութեան միջով»:

..

Մեր գաղափարական եղբայրութիւնը Իաշնակցութեան հիմնադիրների հետ — Միքայէլեանից գառ մեզ առանձնապէս մտախի էր մտատուր, իսկ կրտսեր սերնդից՝ Համան (Օհանջանեան), — աննկատելի կերպով փոխում էր մարտական եղբայրութեան: Մենք օգնում էինք միմեանց նախ և առաջ փոխադրութեան գործում: Իաշնակցականները ծանօթացնում էին մեզ իրենց «դեմոկրատիկ», փողոցի զանգւածային կռիւներին յարմար, «մակերոնական» տիպի առւերքերով: մենք մեր այն գերազանցօրէն կառարեկազարծւած և ուժեղ ուսմբերին, որոնց բարձր յատկութիւնները ապացուցին յետագային

Պէլէլէի, մեն իշխան Սերգէյի և ուրիշների գործերում: Մենք այդ ժամանակ մի շարք փորձեր էինք անում Ժընեվի, ապա Պարիզի շրջակայքում և Բրէտանի եղբրքներին: Նման փորձեր կատարում էին և Իաշնակցականները, Եւ, յանկարծ, շշմեցնող մի լուր: Միքայէլեանը զոհ է գնացել ուսմբի...

Անուղղելի, սարսափելի՝ կրտսի թարմ տպաւորութեան տակ, ոմանք, յերում եմ, մեղադրում էին Միքայէլեանի ընկերներին, թէ բաւականաչափ չէին պահպանել մտաւոր և քաղաքական զգույնի բարձր կարողութիւն ունեցող մի մարդու... Անարդար մեղադրանք: Եարժման ղեկավարները չեն կարող ղեպի մահ ուղարկել միայն երիտասարդութիւնը կամ երկրորդ ու երրորդ կարգի աշխատարդներին: Կայ ու պէտք է լինի համերաշխութիւն «կրակի» մէջ, անմիջական վտանգի դամոկլեան սրի տակ, և ղեկավարները չեն կարող «խոհածուրեւն» կենալ «գործարարոյն» թիկունքում: այլապէս կը կորսի բարոյական կապը երանց միջու: Նուաւեւոր վերջինն է թողնում խորտակող եաւը, և մարտիկ—սպան անձնական օրինակով է գրոհի տանում զինարներին: Մնացեալը՝ բախտաւոր կամ դժբախտ գիպւածի գործ է: Յիշում եմ թէ ինչպէս անձամբ ես հանգուցեալ ահաբեկիչներ Ալեքսէյ Պոկոտիովի (մեռեալ Հիւրաւային Հիւրաւային պարի ժմեցողի) և Նիկոլայ Բիլիմովի հետ (սպանուեց Չարի ժամանակ հրէաներին պաշտպանելիս) փորձում էի մեր նոր աուբերը Ժընեվի շրջակայքում: Որպէպիկ փորձը անենք մօտի վարի մասերում, աեքակ շրապալի մտա, վաղ լուսաբացին, երբ դեռ ամենքը քնած են, մենք վեր կացանք անուրսին դիշերուս կէսին և, աուբերը ձեռներին, գաղտնաբողի անցանք անտառի միջով: Յանկարծ, Բիլիմովը տայթաբէ և քիչ մնաց ընկներ: մի քանի ժամանակ ճոճւում էր մթութեան մէջ — և այդ մի քանի վայրկեանների ընթացքում մեր երեքիս կեանքը մազից էր կախւած: մի անյաշող շարժում ևս—և մեզանից կը մնար ստակ յիշողութիւն: Միքայէլեանը զոհ գնաց հանգամանքների ճակատագրական դատարարութեան, և այդ համարում էր քնական: յեղափոխականին վայել չէր մեռելն անկողնում: Գէթ այդպէս էին դատում մարտական այն դաժան և ամբարկու սերնդի գործիչները:

Յիշում եմ, թէ ինչպէս Իաշնակցականների Ընդհանուր ժողովը 1904 թ. մարտին առաջարկեց «Կովկասեան Պատասխանատու Կոմիտէին» ձգտել հաստատելու համերաշխութիւն որեւէ եղբայրական ընկերվարական կազմակերպութիւնների հետ և, ինչպէս բանաձեւն էր ասում, «ժողովը մասնանիշ է անում յատկապէս սոցիալական—յեղափոխականների կուսակցութիւնը, որ թէ իր սոսական աշխարհայեացքով և թէ կուի տակտիկայով՝ աւելի է համապատասխանում մեր ծրագրի ընդհանուր ոգուն»:

Հէնց նոյն ժամանակ, Իաշնակցութեան նոր ծրագրի կազմութիւնից առաջ՝ մենք քննեցինք ծրագրի հետ հոգային ծրագրի սկզբունքները և, յատկապէս, հողերի համայնացման հարցը թէ իր ընդհանուր հիմունքներով և թէ, մասնաւորապէս, իբրեւ միջոց ազգային—հոգային խճճեմ ինդիւրների, գաղթականութեան և այլնի լուծման:

Մեր սրտագին բարեկամական յարաբերութիւնները դիմացան նոյնիսկ ամենալուրջ փորձութիւններին, երբ յետոյ,

առաջին յեղափոխութեան շրջանում, 1905-ին, Ռուսաստանում ծնունդ առաւ «երիտասարդ-դաշնակցականների» շարժումը, որի կողմնակիցները միայն իրենց էին համարում իսկական սօցիալիստ-յեղափոխական և մեղադրում էին չին կուսակցութիւնը ընկերվարական նպատակների մոռացութեան, աշխատանքի ծանրութեան կեդրոնը թրքահայ դատի կողմը տեղափոխելու, ազգայնական տարրերի նկատմամբ ցուցարարած դիշուսիտի և այլ յանցանքների մէջ: Կողքից դիտողին կարող էր թւալ, որ այս «անջատականների» պատճառով Սօցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան և Դաշնակցութեան միջև անխուսափելի կերպով առաջ կը գայ կռիւ ու խլով: Սակայն, այդ բանը տեղի չունեցաւ: Եւ տեղի չունեցաւ այն պատճառով, որ ռուս էսէրները կողկատում միանգամայն անշահարկոր կերպով, ամենայն անկեղծութեամբ ու շիտակութեամբ փորձեցին միջնորդ հանդիսանալ թշնամի կողմերի միջև — առանց այդ սնանկին ներքին վեճի մէջ դերագոյն դատաւորի դեր ստանձնելու որ և է կեղծ յաւակնութեան, նրանց փոխարարձ հասկացողութեանը նպաստելու միակ անխախտ դիտաւորութեամբ՝ լինել բարեխղճ վիպ հասկացողութեան գալու և համախորհուրդ երկու կողմին էլ փրկացնող ինք գտնելու վերջին փորձում: Այս հաջողարար առաքելութիւնը յաջողութիւն չունեցաւ: Եւ այն ժամանակ, հասուն խորհրդածութիւնից շտապ, չին կուսակցութեան համաձայնութիւնն առնելով՝ էսէրները անջատած «երիտասարդ-դաշնակցականներին» կամ «անջատականներին» ընդունեցին իրենց կազմակերպւած շարքերի մէջ, իբրև ազգային առանձին հաստեղ, այն յոյսով, որ այս փաստը կը հանգստացնէ ու կը չափաւորէ նոր «հայ էսէրների» ներքին-կուսակցական վեճերի ու աղմուկների դառնութեան արտփիւնը, կազմակերպական տեսակետով կը բաժանէ նախկին ընկերներից և յանձնին ընդհանուր էսէրական հայ-ռուսական կենտրոնների կը ստեղծէ միջնորդներ, որոնք կը թուլացնեն տակաւին շատած բաղադրանքների թափը: Ապագան ցոյց տուց, որ հաշիւը ճիշտ էր. այն ամէնը, ինչ որ դու հնարաւոր էր անել անջատումից առաջ եկած բացասական կողմերը վերացնելու համար, արեց:

Բայց վերադառնալք այն օրերին, երբ Միքայելեանի նախաձեռնութեամբ՝ տեղի էր ունենում մեր մերձեցումը Հ. Յ. Դաշնակցութեան հետ:

Այդ մերձեցումը արտայայտեց և զրական աշխատանքի շրջանում: Դաշնակցութիւնը լայնօրէն օգտուում էր մեր տեսական գրականութիւնից հայ երիտասարդութեան նոր սերունդների ընկերվարական դաստիարակութեան համար: Իսկ միւս կողմից մեծօջիցիոնալայա Ռոսիայի մի շարք համարներում մենք տալիս էինք դիտարկութիւններ կայ յեղափոխական շարժման մասին, որ ստանում էինք անմիջապէս «Գրօշակ»-ի խմբագրութիւնից: Յետագային, այդ բաժինը սկսեց վարել ընկ. Լուկինիչը (Արարատսիկ), որը հենց իր ծագման շնորհիւ (հայրը՝ ռուս, մայրը՝ հայ) սերտ կապի կենդանի մարմնացումն էր մեր և հայկական շարժման միջև: Նրա գրչին է պատկանում Դաշնակցութեան գաղափարական իրրերի պերճախօս պաշտպանութիւնը ընդհմ ռուս մարկսիստների — «Իսկրովնիկ»-ների յարձակումների («Հ. Յ. Դաշնակցութիւնը ուղղափառ համբակութեան առջև», Ռև. Ռու., 1905 թ No 63),

Այդ մարկսիստները յարձակում էին մեր դաշնակիցներից իւրաքանչիւրի վրա և նրանց դիւրի վրայով՝ նշան էին անում մեզ: Ի մասնաւորի, նրանք այն ժամանակ յայտարարում էին («Իսկրա» No 44), որ ազգային ինքնորոշման իրաւունքի կատարելու և բացարձակ ճանաչումը, որ առաջադրել է Ռեւոլ. Ռոսիայն, բուրժուական-դեմոկրատան ճրճուան խօսք է միայն»:

Անձամբ ես, «Ազգային ստրկացում և յեղափոխական ընկերվարութիւն» յօդուածում (1902 թ.) հաստատել եմ մեր ծրագրի հիմքերը ազգային հարցում, իսկ յետոյ, աւելի ուշ, («Ազգ. հարցը և յեղափոխութիւնը», 1903 թ.) այլ հիմքերը կիրաւել եմ յատկապէս հայկական խնդրի վերաբերմամբ: Հայաստանը ինձ համար «Ախլայի Լեհաստանն» էր, որ անխուսափելի կերպով, տարբեր տարրական ուժով ձրգաւում է Հաւաքել ի մի, ամբողջական կենտունակ մարմնի մէջ իր membra dissecta: Այդ սնդուսպ կենտրոնաձիգ շարժումը, գրում էի ես, միշտ էլ պաղարիւն, անխնայ ու շահախնդիր կերպով պիտի օգտագործւի մերթ ընդ մերթ ձայատանի շարեկամի և հոյանաւառի դիմակը հազնող զանապան աշխարհակալ դիշուսիտների կողմից: Բայց-այդպէս է ընդհանուր օրէնքը. «Մէ սեփական և ո'չ օտարերկրեաց կառավարութիւններից, ո'չ դիւնապիտութեան խորամանկահիւս խաղերից, ոչ էլ կեղծ-քաղաքագէտների հաշիւներից ներկայումս կարող են սպասել իրենց ազատութիւնը ճիշտած ժողովուրդները: Եւ առանձնապէս կարեւոր էի համարում ցրել հայկական որոշ շրջաններում տարածւած այս պատրանքները: Միայն միտանց հարեւան ժողովուրդների դեմօկրատիայի և ընկերվարութեան հասունացման գործանք շատաշնորհութեամբ, նրանց աշխատանքի ժողովուրդների համախորհուրդ ճիգերով, ոչ թէ վնասից, այլ վնասից կարող են ձեռք բերել իւրաքանչիւր ազգի ազատ մշակութային զարգացման պայմանները: Եւ ես պարօք էի համարում նախազուշացնել. «այստեղ ծագում է մի նոր՝ ցուազին և հրատապ հարց այն մասին, որ ընդհանուր թշնամու և հարստահարիչի դեմ մղւած կուում ալլպան ազգութիւնների յեղափոխական ուժերը չընդհարւին թշնամաբար միմանց հետ, փոխադարձ բաղադրանքով չհաշմանքան ընդհանուր գործի յաջողութիւնը, որ ընդհանուր անշուրթ թոքափշուց յետոյ՝ նրանք չոչնչացնեն յարթութեան պտուղները յանկարծական ազգայնիցեան խոռոչներին»:

Այս խօսքերի մէջ կարծես հնչում է նախազգացումը ապագայ դիւսած ընդհարումների — հայ — վրացական, հայ — աղբերջանեան — որոնց վկան եղանք մինք բան տարի յետոյ: Էլ աւելի ուշ, 1905-ի սկզբին, մենք, Ռուսաստանի սահմաններում գործող արիւշ վեց ազգային-ընկերվարական կուսակցութիւնների հետ միասին, գործնական կերպով դարուցնեցինք այլ և այլ ազգային խնդիրներով, ձեւակերպեցինք, իբրև ընդհանուր պահանջ, «հրաւիրել Կովկասի համար, իբրև Ռուսաստանի հետ դաշնակցական կապերով կապւած ինքնավար մի մասի, սահմանափր ժողով այս երկրի ներքին բովանդակ կամը, ժողովրդավար — դաշնակցական սկզբունքներով վերակազմելու և վերոյիշեալ պայմանների հիման վրա Կովկասեան ինքնավարութեան երաշխիքների մշակութեանը մասնակցելու համար», — այսինքն, «համապատասխան ազ-

գութիւնները գերազույն ներկայացուցելը հանդիսացող առանձին սահմանադիր մարմինների միջև կնքւած ազատ համաձայնութիւնների ճանապարհով):

Սօցիալիստ-լեզափոխականների կուսակցութիւնը հաւատարիմ էր այս համաձայնութեան՝ Սահմանադիր ժողովի առաջին և վերջին նիստում, 1917-ին, Ռուսաստանը յայտարարելով ժողովրդավար ու դաշնակցական հանրապետութիւն, որով իրականացւում էր նոյնիրաւ ազգութիւնների ազատ միութիւնը՝ «գերիշխան ընդհանուր Դաշնակցութեան սահմանադրութեան շրջանակում»:

Միշտ ստորագծելով իր սկզբունքային կողմնակցութիւնը դաշնակցութեան գաղափարին, որի էությունն է՝ սերտ համագործակցութիւնը հարեւան ազգութիւնների՝ նրանց կատարեալ հուսաարութեան հիմքերով, մի համագործակցութիւն, որ չի կրճատում՝ նրանց ապստոխութիւնը, բայց անկասկած է գորութիւնը, ուստի և պատահովութիւնը — մեր կուսակցութիւնը համարել է սխալ՝ րոնադատել հարեւաններից որ և է մէկին ընդունելու դաշնակցական միութիւն ուստի ժողովրդի հետ: Այս իմաստով էլ դրել եմ ես («Ռուս. Ռօսիա», Նոյեմբ. բեր, 1903 թ.). «Մենք ազգային հարցի լուծման բոլոր դէպքերի համար վերացական ոչ մէկ ձեռնուները. ես կը լուծեմ ամէն անգամ՝ համապատասխան տեղական պայմանների, և իւրաքանչիւր ազգի համար վճռական նշանակութիւն պէտք է ունենայ միայն իր ձայնը. Հէնց դրա մէջ է ազգային ինքնորոշման սկզբունքը, որ մենք ընդունում ենք անպայման և առանց առաւելութեան»: «Ազգային ինքնորոշում» նշանակում է թոյլ տալ, որ ինքը ազգը վճռէ, թէ արդեօք կամենում է ուրիշ ազգի հետ միեւնոյն պետական յարկի տակ ապրել, թէ ոչ ուզում է ըրողովին առանձին յարկի տակ ապրել և կամ, վերջապէս, մնալ դաշնակցական միութեան միացեալ յարկի տակ: Եւ անառարկալի է, որ «ժամանակակից պետութիւնները այնպէս, ինչպէս կազմել են պատմութեան ընթացքին, համարեա միշտ ներկայացնում են այնպիսի այլապիսի արհեստական միութիւններ», որ մենք վճռակեանքով հրամարում ենք «նրանց կենտրոնաձիգ գոյութեան փաստը ճանաչել որպէս օրէնք»:

Ինձ համար պարզ է. արդի բազմազգի բարդ պետութիւններին վիճակած է կամ վերակազմել դաշնակցական սկզբունքով, կամ ենթարկել բայցայման: Որը ուշանում է վերակազմել, պատմութիւնը նրան պատժում է՝ բաժան-բաժան անելով: Պատմական այդ վրէժնիղով աստուածուհու գայուստը փութացւում է պատերազմներով: Եւ այն թէ ինչու, երբ պայթիւց համաշխարհային պատերազմը, և երբ կրակի դժից և երկաթալար փշոտ պատնէշներից «այս կողմը» գտնուողներից շատերը խանդավառուած՝ սկսեցին սպասել Աւստրո-Հունգարիայի քայքայումը, ես այդ ոգեւորւած մարդկանց դիմին թափեցի մի գոյլ պաղ շուրճ գրելով. «Այսօր դու, իսկ վաղը ես» պերճախօս վերնադիրը կրող մի յօգաձ, որի մէջ ծաղրի ենթակեցիք նրանց, ովքեր Աւստրո-Հունգարիան համարելով ժողովուրդների մի բան» էլ էին կարողանում «իրենց վրա նայել»: Ես մարդաբէնում էի, որ եթէ պատերազմը սեւեւ այնքան, որ Հաբսբուրգների «ցնցոտեալապատ կայսրութեան» արհեստական կապերը չլիմանան, նրա յետեւից կը սկսեն ոչ պակաս ահաւոր փլուզու-

մով քանդել ու կորստւել և Հէնց բազմազգի մասեր ունեցող Ռուսաստանի կապերը: Այսպիսի յանգուզն մտքերի համար ես ուստի ազգասէրներից շատերի համար դարձայ «ոչ-ուստ»: Այդ ինձ Հէր յուզում: Համաշխարհային պատերազմը խորասկուծն էր այնքան ամրութիւնների, այնպէս մեծ փլուզում էր, որ նրա հետեւանքներն, ի հարկէ, Հէին կարող հետաւեանքը տեղաւորել պարզունակ «հայրենասէրների» մտքերի մէջ:

Նման փլուզումները իտեղի մէջ ինչպէ՞ջում առաջ բերելուց առաջ, փոփոխութիւն են առաջ բերում մտքերում: Եւ զարմանալի չէ, որ մտաւոր խառնափնթորութիւնը ամենից առաջ երեւան եկաւ փոքր ժողովուրդների դէմօկրատիայի մէջ — ժողովուրդների, որոնց վիճակած էր խաղալու տաշեղի դեր պայթելու պատրաստ համաշխարհային փոթորկի պիքերի վրա:

Յիշում եմ, թէ ինչպէս բախանեան պատերազմից անմիջապէս յետոյ, ինձ ծօտ եկան լիջ ընկերվարական շարժման ներկայացուցչները (հանգուցեալ Եօղիօն իր ընկերներից մէկի հետ) և յայտնեցին ինձ մտաւորապէս հետեւեալը: Անխուսափելի է պատերազմը Աւստրիայի և Ռուսաստանի միջեւ: Աւստրիային կ'օգնէ Գերմանիան: Ռուսաստանին այս պատերազմում ապաստում է պարտութիւն: Ռուս դէմօկրատիայի համար այդ պարտութիւնը, նրանց կարծիքով, ինտսակար չի լինի. ես կը բերեմ բացարձակապետութեան խորտակում: Իսկ ինչ վերաբերում է լիջ ընկերվարականներին, նրանք պէտք է օգուտործեն գալիք պատերազմը: Լեհաստանի անկախութեան յարտիւն տալու համար — թէ՛ կուզ, առ այժմ, միայն առաւական Լեհաստանի սահմաններում: Դրա համար անհրաժեշտ է, որ իրենք ապստամբելով Հնչոտացեան աւստրո-գերմանական զորքերի գործը: Գարով Լեհաստանի Աւստրիական ու գերմանական մասերին, ի հարկէ, նրանց մասին առ այժմ կարելի չէ խօսել: Լեհ ժողովուրդը այնքան ուժեղ չէ, որ միանգամից երեք ճակատի վրա կռւի: Պէտք է ընտրել չարիքներից փոքրագոյնը և լողալ հտանքով: այդ նշանակում է ընտրել աւստրո-գերմանական օրէնտացիա: Եւ Եօղիօն հասկացելու տեց, որ աւստրո-գերմանական սպանելու, գուցէ և նրիական միջոցների, օգնութեամբ, լիջ ընկերվարականները զինուորական մարզանքներ են անում և կազմակերպում են մարտական աւժեր: Նա կամենում էր իմանալ, ինչպէս կը վերաբերենք նման գործեակներպին մենք՝ ուստի ընկերվարականներս:

Իմ պատասխանը — իրաւ բացասական — նրա համար եղաւ անակրեակալ: Իսկ ես խորապէս վիրաւորւած էի ցարդ մեղ զաշնակից եղող լեհական կուսակցութեան ընկերվարական դէմքի անտարաբութեան ու մաքրութեան խաթարման համար: Նա պատրաստուած էր «օգուտագործել» յօգուտ իր շահերի աւստրո-գերմանական զօրութիւնը: Ես գուշակում էի, որ ես ինքը կ'օգուտագործեի վերջինից և գէնք կը գառնայ ընկերվարութեանը խորթ շահատիրոջ մտադրութիւնների, այսինքն՝ բարոյապէս կը կորչի: Իսկ ինչ վերաբերում է գործնական յաշոգութեան կամ անյաշոգութեան, այդ կը լինի դիպակածի գործ: վիճակախաղ է այդ, տաք բախտախաղ ուրիշի թղթով և ընկերվարութեան սկզբունքների տեսակէ-

տից՝ արկածանկարողութիւն: Ես ցոյց էի տալիս, որ եթէ լեհերը ցանկանան յարթութիւն գերմանացիներին, թէկուզ յանձինն Հաբսբուրգների և Հոհենցոլերների; նրանց հարեանները՝ չէխերը, ընդհակառակը, կը կամեան, որ յաղթեն ուսուները, թէկուզ յանձինն «Նիկոլայ վերջինի» (այս ուսուեր ես նրան տւել էի դեռ 1903-ին և շահաւէցի): Իմանապէս և Կոմկառու: Այլ օրինակացիս կիրաքանն հայերը և միւս, ճիշտ հակառակը, լեռնականներն ու թաթարները: Նոյնը կը պատահէ և Բալկաններում, և այլն: Ո՛չ թէ պէտք է պատերազմ բաղձալ, այլ բոլոր ուժերով վախենալ նրանից: Ո՛չ թէ կապել այս կամ այն կառավարութեան հետ, այլ ջանալ խուսափել պատերազմից — ահա թէ ինչ է հարկաւոր բոլոր ընկերվարականներին և, մանաւանդ, փոքր ազգերի ընկերվարականներին — ազգերի, որոնց պատերազմը կը զարնէ մէկ մէկու: շահերի և եղբայրասպան վէճերի սուր հակադրութիւնների մեջ:

Մենք լեհ ընկերվարականների հետ ընդհանուր լեզու չգտանք: Տարբեր ձևով իւրացրինք պատերազմը և այն օսականութիւն հայ ընկերների հետ, որոնց գտաչ ես, պատերազմը բուռն շրջանում, ժըռնում: Նրանք համաշխարհային պատերազմի ապագայ հետեւանքերի մեջ տեսնում էին միացեալ Մեծ Հայաստանի վերածնութիւնը: այդ պարագան թելադրում էր նրանց իւրացնել պատերազմը լինելու պատրաստ լողալու նրա հասանքով: Իսկ ես մտայ կերպով էի հայում ապագային և ժողովում էի, որ նման ծրագրիներէ իրականացումը կը լինէր լոկ հրաշքի հաստար քախտաւոր մի դիպուած: Իմ անտակէտից անհամեմատ աւելի զուրահակամտութիւն կար, որ հայ ժողովուրդը պատերազմից դուրս գայ հայման զանաձ, վիրաւոր և արիւնքաւոր: Ի դժբախտութիւն հայ ժողովրդի, իմ վախերն ու յոռեռեստութիւնը դուրս եկան աւելի համապատասխան իրականութեան Բայց այն ժամանակ ինչ կարող էին անել իմ փաստարկութիւնները: Հայ, լեհ և ուրիշ ընկերվարականները տարւելին իւրաքանչիւրը իր բախտաւոր կամ դժբախտ ճակատագրով:

Երբ Անդրկովկասը տարկած եղաւ անջատուել Ռուսաստանից, իսկ յետոյ բաժանուել ազգային բաղադրիչ մասերի, ես ըմբռնում էի այդ իբրև «սկիզբն երկանց»: Ես խոնարհւում էի հանդէպ այն «հերոսական յուսահատութեան», որով բնորոշում էին անկախ Հայաստանի Հանրապետութեան գոյութեան վերջին օրերը: Եւ ամենաջերմ գոհացում էի զգում, որ այդ ճակատագրական վայրկեանին հայ էսերները դաշնակցականների հետ միասին ժողովում էին ազգային ինքնապաշտպանութեան կառավարութեան մեջ: Բայց ես համարում էի, որ խնդիրը վերաբերում է հայկական հանրապետութեան պատուի փրկութեան քայց ոչ գոյութեան: Գասարթեաձի ողբերգութիւն էր այդ...

Եւ երբ ես մտածում եմ հայ ժողովրդի ու հայ ընկերվարութեան ճակատագրի մասին, իմ սիրտը կձկուում է այն մտքից, որ ես, համաշխարհային ողբերգութեան վերջաբանում հանդիսացաւ ամենախորթը պատմութեան խորթ զաւակներից: Բայց նրա անօրինակ և ոչնչի հետ չհամեմատուող ասուջանքները տեղի են ունենում ժողովուրդների ողբերգութեան անկարելից ու խուլ միջավայրում: Ես յիշում եմ. մօտ երկու տասնեակ տարիներ առաջ,

կրբ Բրանդեր կարողւմ էր Բէրլինում իր նշանուոր դասականութիւնները «Հայաստան ու Եւրոպան» կիւթի մասին — մերթ ընդ մերթ պէտք էր լինում ընդհատուել այդ դասափօսութիւնները, երբեմն չէր յաջողում աւարտել. սրահը թնդում էր հեծկտանքից...

Ո՛վ լաց կը լինի այժմ ինչ որ օտար ու հեռաւոր մի ժողովրդի տանջանքների վրա: Երեսակայութիւնը սժգունել է: Աշխարհ վարժուել է արեան, բռնութիւնների, մարդկանց զանգաձային զոհերի պատկերներին: Մարդիկ յոյնել են ողբերգութիւնների մասին մտածելուց և տարտամ փետացումով աշխատում են չմտածել, այն մասին, որ ընդունակ է վրդովել ու զարթոնել նոյն իսկ ամենազրահապատ խիղճը:

Բայց մենք, որոնց համար հայ ժողովուրդը, հայ աշխատաւոր դէմօկրատիան ու հայ ընկերվարութիւնը օտարներ չեն, այլ ողով, աւանդութիւններով և մեր բովանդակ կեանքի ու ընդհանուր պայքարի ամենատարբ յիշողութիւններով շաղկապւած հարազատներ, մենք չենք կարող հաշտուել այս ընդհանրական անարտութեան հետ զէպի էլ աւելի ողբերգական դարձած հայկական հարցը — հարցը մի ժողովրդի, որ վտարւած է իր հողի ինը տասներորդից և ցրւած է աշխարհի չորս ցօղիքին...

Մենք դիտենք. ուսու աշխատաւոր դէմօկրատիան յարութիւն կ'ունէ դեռ: Եւ նրա յարութեամբ նորից պատմութեան նախաբեմի վրա կը դրուի հայկական այժմ տրորւած, «մօզուլից ընկած», բաց և այնպէս ճակատագրական ու ազազակող և անյոյժ մնացած հայկական խնդիրը — պատմութեան խորթ զաւակը հանդիսացող մի ամբողջ ժողովրդի կեանքի ու մահուան հարցը:

ՎԻԿՏՈՐ ՉԻՐՆՈՎ

Ի Լ Զ ՈՐ Ի Մ Ն Է
 Հ. Յ. ԳՆԱԶՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ

Գաշնակցութեան Օրուան առթիւ, արժէր յետագարձ մի հայեացք ձգել մեր անցած շրջանների վրա. այդպիսով մենք ի վիճակի կը լինենք մեր գոյութեան և ուժի գաղտնիքը հասկանալ և օգտուարձել նրան:

35 տարուան կեանքը յեղափոխական մարտական մի կուսակցութեան համար, որպիսին է մեր կուսակցութիւնը, հազուադէպ է. մանաւանդ այն կեանքը որ իր հետեւը թողուց Հ. Յ. Գաշնակցութիւնը և այն իրականութիւնը, որ սպրեց հայ ժողովուրդը, ոչ մի ժողովուրդ և ոչ մի կուսակցութիւն չէն սպրել այդպիսի կեանքով:

35 տարիներ անընդհատ մեր կուսակցութիւնը քայլել է ժողովրդի հետ, ի յ ա ս ո ս ս ա թ ի և ս ի լ ի ն ճ ն ա ս ա ղ ը ղ ը վ, միշտ և ամէն տեղ, լայն ու նեղ օրերին. և այս միջոցին ժողովուրդին ու Գաշնակցութիւնը ճանաչել են իրար, ինչպէս կարող են ճանաչել ծնողն ու զաւակը. ճանաչել են նոքա միմեանց բովանդակ իմաստով, աւուելութիւններով և թերութիւններով: Մեր կուսակցութիւնն է եղել միակը հայ իրականութեան մեջ, որ կեանքի ծանր բողբնների չէ կորցրել իր հաստարակչութիւնը, ոպի է ներշնչել ժողովրդին՝ ապրելու, տակաւուկէ դիմադրելու համար:

Այսպէս է, որ ժողովուրդը և մենք ընտելացել, մտերմացել և հոգեպէս շփակաւուել ենք:

Այսպէսով է, որ Դաշնակցութիւնը ի վիճակի է եղել ճանաչելու մեր ժողովուրդը, մինչև նրա հոգու ամենախուլ անկիւնները, թափանցել է և ըմբռնել մեր ցեղային բնագրերը՝ դառնալով այսպէս գործադիր ցեղային պոսեմցի:

Սա այս պատճառով է, որ նա դարձել է բնական և բարոյական իրաւունքով օտուռած Թարգմանը նրա ձգտումների և ապրումների:

Ձուլումը ժողովրդի հետ այնքան սերտ է, որ մեր քննադատներին ձգել է սխալների մէջ: Օրինակ. առում են թէ՛ Դաշնակցութիւնը, իր գործելութեան մէջ, ինքուրոյն չէ՛ եղել, այլ միշտ գնացել է ամբարի յետեւից: Ճիշտ է սա՛ ի հարկէ, ո՛չ:

Թիւրքհայութեան աստապանքերից է ծնուել Դաշնակցութիւնը: Նրոնից առաջ թիւրքահայ ժողովուրդը բազմաթիւ անգամներ պտօնակացել է թրքական հարստահարութիւնների դէմ, բայց միշտ դիպուածական և հասուածական և, ուրիշ, անկապմակերպ:

Մեր կուսակցութիւնը համախմբելով բոլոր զգոճ տարրերը և հատուածները՝ նոցա ուղղեց միևնույն նպատակին:

Եւ յետագայ դեպքերը հետեւանք էին մեր պայմաններում գոնուող Պարբի պայմանների: Լեռնային մասերի ասպտամբութիւնները, վէճիմիղրական թէ աշաբեղական, և նրանց յաջորդող հրաձանքն ու արևելք անխուսափելի էին այլ յոսանաճառ պայքարի մէջ: Ժողովուրդը ըմբռնել էր այս և ընկ աւաճ էր գնում:

պակեբացնում, ինչպէս բուրժուազիան որի Համար ենկիպ կարգերը իրենց «բազաքական» ապատութիւններով ու Հասարութիւններով՝ Հանրային-պետական կեանքի վերջնական և լուսազոյն ձեւն են Հանդիսանում: Աշխատաւորութեան Համար ղեմակրատիան լոկ մի Հանգրւան է իր պատասգրութեան ձանապարհին, որի վրայ ամբանալով՝ նա պիտի կազմակերպէ իր զասակարգային պայքարը լանուս ընկերպարական կարգերի: Այդ պատճառով էլ նա Հետեւողական և իրականաբար ժողովրդապետութիւնը իր անմիջական պայքարի նշանակէտը դարձնելով Հանդիք՝ չէ Համամբուում մինչև իսկ առաջադեմ բուրժուական կուսակցութիւնների ջուրջը, այլ ընկերպ վարական կուսակցութիւնների մեջ է որոնում իր գործի առաջնորդութիւնը:

Այսպիսով մեք տեսնում ենք, որ այսօր Հանրային կեանքի աշակերտեան բնուսում՝ Փաշիզմն է Հանդիսանում բոլոր յետադիմական տարրերի ձողողական ուժը, իսկ ձախակողմեան բնուսում՝ ընկերպարութիւնը, որի զրօշակի տակ Հակայական զանգաւմներով Համամբուում է իր պատմական կոչումին զիտակից աշխատաւորութիւնը:

Այս երկու բնուսներից զուրս խցնախօրէն քարշ է գալիս կամուրջիցմը, որի Հետեւողները մի կողմից ատիճանաբար նազում են,՝ իսկ միւս կողմից՝ օր ըստ օրէ կորցնելով իրենց զարգափարականութիւնը և տարեկող իրեանաօրեական ընազներից՝ մերձենում Փաշիզմին: Սրանով են բացատրում այն սերալիւր անկարկները, որ Մուսոլինի և իր արբանեակները նետում են, մանուսնող վերջերս, զեպի Գրեմլի ղեկասարտները՝ դրանեպիտանական աշխարհում բացայայտի մտահոգութիւնների դուս բանալով: Սրանով են բացատրում Հուսն. զարական Հորտիի փսփոսկները Մոսկվայի ներկայացուցիչների Հետ Վերջապէս սրանով է բացատրում այն սրտաուռ Համերաշխութիւնը, որ տիրում է բոլշեւիկների և Քէմալ փաշայի միջև, չնայած այն բանին, որ Մուսոլինիի Հետեւերով քալող այս ղեկասարտը անխնաօրէն կոտորել է տալիս իր երկրի կամուրջներին...

Գամուրջիցմի այս ատիճանական Հիւճման և այլասեւման Համար աշխատաւորութիւնը ոչ լաւու և ոչ ինդալոս պատճառ ունի՝ նա պիտի գիտակցի միայն, որ զա բնական վախճանն է այն բոլոր Հասանքների և վարդապետութիւնների, որոնք Հանրային կեանքի կազմակերպման Համար իրենց կամքն ու քմահաճոյցն են օրէնք նկատում: Այս զիտակցութիւնն անհրաժեշտ է, որպէսզի ամեն մի աշխատաւոր վերջնականապէս ըուժի բոլոր տեսակի բոլշեւիկեան և Փաշիտական Հիւանդութիւններից և վերադառնայ զեպի այն ձանապարհը, որի վրայ աշխատաւորութիւնը կազմակերպուել է իբրև դասակարգ և Հզօրացել իբրև ընկերպարութեան զրօշակակիր:

Հետեւողական ղեմակրատիայի վերելքը այս ղիտակցութեան արտայայտութիւնն է Հանդիսանում:

Ե. ԶԱՄԱԿԵՆՆ

* Այս նազման տեսակէտից յտուկանշական փոտտեր է տալիս Երրորդ Ռաներասիրնալի մեջ ուուսականից յետաք առաջին տեղը զրաւող զեմանական Գամուրջիան Գուսակցուութիւնը, 1924 թ. մայիսեան ընտրութիւններին այս կուսակցութիւնը ստացել է բոլոր քէների 12,70/0-ը: Նոյն քէի ղեկոնճերեան ընտրութիւններին՝ 90/0-ը: իսկ այս տարւայ մաստ ամին նախագահական ընտրութիւններին՝ բոլոր քէների միայն 70/0-ը:

ԹՈՒՐԻԳԻՈՅ ՀՈՒՐՋԸ

~~~~~

Մուսթաֆա Քեմալ կը շարունակէ իր յղթնական արտոյանները Անատոլիոյ գաւառներուն մէջ, առանց շատ խորհրդը երթալու, և միշտ զգուշանալով Պոլսէն:

Այս ազնկալի և շոգեպիկը արշաւին գլխաւոր նպատակն է ցուցադրել և ամրապնդել նոր վարչութեան հմայքը, պատանել տալ ֆէւտիսի ու փաթթոցները, քողերն ու միւսպակները, որպէսզի թուրք ժողովուրդն ալ հասնի քաղաքակրթութեան բարձրագոյն աստիճանին: «Ամբողջ աշխարհ պէտք է գիտնայ թէ թուրք ազգը բոլորովին սրբած է զէջ անցեալին հետեւանքով իր ուղեղին մէջ գոյացած ժանգերը»:

Եւ որպէսզի կանգ չառնէ « ժանգերը թափելու » գործողութիւնը, այս պոռոտախօսութիւններուն հետ միաժամանակ, թուրքիոյ ամէն կողմը կը կատարուին « եւրոպականացման » խելկատակութիւններու Տեղի կ'ունենան, իբրև թէ ինքնաբերաբար, ցոյցեր և բողոքներ փաթթոցաւորներուն կամ ֆէւտաւորներուն զէմ, որոնք նոյնքան սարսափ մատնուած են այսօր, որքան երէկ, զխորակտրները: Պոստոյ մէջ, անհաստներ կամ խմբակներ կը պտտին տունէ տուն, խանութ խանութ, և կ'ազդարարեն, կը սպառնան որ զլիարկ դնեն: Այս նորութիւնն ալ շուտաւէտ գործեր բացառ թուրք վաճառականներուն, մանաւանդ Սելակիցիներուն, Տեօնիկներուն առջև, որոնք միշտ կացութեան տերն են: Միևնայն ատեն, ոգևորութեան, ճամարտակութեան սապարէզ մը ստեղծեց թուրք երկուստարութեան համար, որ, թերուս և բռնաբարայ, շահիթը կը տեղայ աջ ու ձախ, համաձայն տրուած սղգանջանին: Երէկ, Իթթիկատի օրով, այս միևնոյն երկուստարութիւնն էր որ պատերազմ կը պահանջէր Աստրիոյ, Իտալիոյ կամ Պուլկարիոյ զէմ, ազակիներ խորտակելով, զբլխարիներ պատռելով, նոյն իսկ եւրոպական տառերը ջնջելով շարժակներու վրայէն: Այսօր, նոյն սերունդը և նորագոյնը, կը ծափէ և կը պարէ նոր քայլերդին համաձայն, երեսնապէս քայլ մը աւելի առաջ երթալով, բայց, իրականին մէջ, աւելի գարգացնելով և զայրացնելով մոլեռանգրութիւնը, անկիրթ ու աններգ ոգին և թթու միջնագարեան սղգայնականութիւն մը որ իր նմանը չունի թուրքիոյ պատմութեան մէջ:

Յաճախ, կատարեալ սահմարտութեամբ կը փորձենք իմանալ թէ, վերջապէս, ինչ իրական քարտիկիտում յառաջ բերու թուրք երկուստարութիւնը, 1908էն ի վեր, քուն թրփական քարտիտ սեպակէտով: Ու շինք գտնե՞ր պատասխանը: 1915-1916ին, հայաջնիջ սարսափներուն ատեն, այդ երկուստարութիւնն էր որ ամենէն զազանալին տեսարանները ստեղծեց: Ինչ որ կը վարանե՞ր ընկ 60-70 տարեկան Քէշիտ փաշա մը, քամերչորս ժամուան մէջ զրուկ և հասէր 27 տարեկան սրկիպ մը, Աթթի պէյ: Այդ զի՞նք նոյնքան զօրացաւ ու ճաւաղեցաւ, որ այսօր, երբ արդէն շարժելիք ժողովուրդ չէ մնացած, կամ շարդը շահարք չի նկատուիր այլևս, նոյն այդ երկուստարութիւնը նոր բարբարոսութիւններ կ'երկնէ, ճանձրութէն շոտանելու համար: Ան է, այդ անուպայ տարրը, որ այսօր ալ զլիարկին ուժով կը հետապնդէ ոչ-խլայտները, որսի շան պէս կը հետեւի անոնց իւրաքանչիւր

քայլին, զարոյցէ մինչև տունը, և կը միրատէ անոնց վերջին իրաւունքները, մայրենի լեղունէն մինչև ընտանեկան սովորութիւնները: Ու վերջապէս, այդ երկուստարութիւնն է որ, առանց պատ ի պատ ձեւերու, պարզապէս հրախիչ որ Հայերը հրոժարին փոքրամասնութեանց իրաւունքներէն, եթէ չեն ուզեր նոր փորձանքներ բերել իրենց գլխուն:

Չարժեր անիլի ճանրանալ այս կէտին վրայ, որովհետեւ այդ երկուստարութեան ամենէն պերճախօս վկայարանը, այսօրուան թուրք մամուլը, արդէն ծածուկ բան չի ձգեր, երբեք այս աստիճան տգէտ, ամբոխային և զրգուր եղած չէր թուրք հրատարակագրութիւնը: « Բացառութիւնները յարգելի են », պիտի ըսէիք, բայց անոնք ալ, սուրբը առած կամ քիչ շատ հատուկ հրատարակագիրներ, աւելի շատ աղուէտի գիր կը կատարեն, Կաճախ աւելի վառակաւոր սայթաքում են կը գործեն:

••

Երկնք է պատմութիւնը այն խելկատակութեան, որով թուրք մամուլն ու պետական շրջանակները յաջողեցան թըրքական փորսխը առաջնորդել փոքրամասնութիւնները: Կէս մը շոյելով կէս մը սաստելով և սպառնալով, անոնք թուրք մը ստորագրել ստիչն Հայերուն և Հրեաներուն, որպէսզի հրոժարին Լօզանի զաշնագրին տրամադրութիւններէն: Մեծ բան մը էր որ պահանջուր դաշնագիրը Ընդհանուր խօսքեր գրի առնուած էին, որոնք ընթացք տալու-չտալու խնդիրը միշտ կախում ունէր թուրքիոյ կամքէն: Բայց և այնպէս, Էնկիւրի ուղեց սեւեռացնել արտաքին միջամտութեան վերջին հետքն ալ, և յաջողեցաւ:

Դաշնագրին տրամադրութիւնները ձեւաւորելու և զործադրելու համար, անհրաժեշտ էր կազմել խառն յանձնախումբեր: Էնկիւրի իր անկանակ համակարանը յայտնելու համար, յանձնարաններու ոչ-թուրք անդամներն անդամ ինքը նշանակեց. և նշանակեց այնպիսի մարդիկ որոնք տարիներով թըրքական մթնոլորտի մէջ սպրած են, և հաւատարմորէն ծառայած թուրք պետութեան: Եւ որպէսզի եւսանդով գործի փարին, վճարել տուաւ անոնց ղրգուած ամսականները:

Այս բոլոր կարգադրութիւններէն յուր շունէր Պատրիարքարանը, ոչ ալ կազմային որ և է շրջանակ: Փոքրամասնութեան ներքին կազմակերպութիւնները շատոնց մոռանուած թեան արուած են թուրք վարչիներուն կողմէ: Արդէն մեծագոյն շնորհք ըրած կ'ըլլան, պատասխանելով զանազան շնորհաւորական հեռագրերներու:

Յանձնախումբերը քանի մը ձեւական ժողովներ կը գումարեն, բայց շուտով երևան կուգան որ Էնկիւրի գոհ չէ այս վիճակէն, նոյն իսկ իր նշանակած հայ «ներկայացուցիչ»ներէն: Եւ շարժման մէջ կը դրուի գնահատան պատրոպ ազգայիններ, որպէսզի ժամ առաջ գրուի ելլէ բուն ծրագիրը: Առաջ կը քարտիչն քանի մը վարկարեկ, թըրքացած Հայեր, ձեռնարկներ կը կատարուին պատուիրակութիւն մը որ կ'ելու Էնկիւրի, երեք թուրք և երեք հայ անդամներով: Էնկիւրի շատոնց տուած էր իր վճիռը- այնպէս որ, աւելորդ կը նկատէ նոյնիսկ պատուիրակութեան առաքումը, և կ'ազդարարէ որ կարճ կապն և անպայման հպատակութիւն յայտնեն, մերժելով զաշնագիրը: Այս ողբալի գործին մէջ

ալ, եռանդ կը վառնէ ստրուկներու և խաբէրաներու խմբակ մը, «Թուրքեհնայ Բարձրացման Միութիւնը»:

Այս կարկուտան միութեան մէջ Հանդիստ սեղաւորուեր են քանի մը անպաշտօն, անօթի Թուրքեր, շրջապատուած խումբ մը Հայաստան տիպարներէ որոնց Թազուպապին է հռչակաւոր Տոբթ. Նաղուպեանը, շանաստիկ Պէհնէտտին Շաքիրի փրկելիչը, ինչպէս ինքն իսկ պարծանքով կը պատմէր Թուրք թերթներու մէջ... Թուրքիա Միացած Հայ ժողովուրդը բարիք մը չտեսաւ այս Միութենէն, որ իբրեւ թէ մերձեցում անաջ պիտի բերէր. բայց անկէ մեծապէս օգտուեցան վարչութեան անդամները, իրենց մէջ բաժնետէլ գոյացած Հազարաւոր ոսկիները, իբրեւ թոշակ կամ ճամբու ծախք: Թէ պետեական շրջանակները և թէ Հանրախի կարծիքը այս Միութեան գոյութիւնը նկատի կ'առնեն այնքան որքան որ կը նպատէ Հայ Հասարակութեան ազգային օրկանները կարգաւորելու և Թրքացուէր գլուխ հանելու: Մասնաւի ներկայացուցիչները երբեմն կը քարեհաճին պատուել անոր սարքած Թէյանեղանները, նորէն և նորէն, Հանդիստարապէս և Հայերու տանը մէջ ձաղկելու Համար Հայերու «գլուխաճամբութիւնը»:

Արդ, այս Միութիւնը լաւագոյն գործիքը Հանդիսացաւ վերջերս, Գորքամասնութեանց իրաւունքի Հարցը լուծելու Համար, այս՝ բառին ջեմիական իմաստովը: Երկար ատենէն ի վեր, Միութեան Թուրք անդամներուն մէջ — Հայերը պարզ խրատիչակներ են կամ աղուշներ — մտքին կ'առնէ Հան-ճարեղ ծշաղի մը, — Պատրիարքարանին ձեռքը բռնելը: Այդ առաջարկութեամբ, անոնք յամախ կը ներգրային որ Հայերը բաւական հնաւտարիմ չեն, դեռ ազգային անջնատ կազմակերպութիւններ և դպրոցներ կը պահեն, իրենց սեփական կալուածները ունին ևն: Երբ օրուան Հայք դարձաւ փոքրամասնութեանց ինդիվը, վարիչ անդամները առիթէն օգտուեցան խրատներ տալու Պատրիարքարանին, նոյն ինքն Էնկիւրիի թելադրութեամբ, և յաջողեցան կախարհել, եթէ ոչ ահաբեկել զայն: Այլապիտ կազմուած «Երեւելեաց ժողով» մը անանց դժուարութեան մտորագրեց սոնճատարութեան թուղթը, ճիշտ այն պահուան երբ ազգային կալուածները կը գրաւէին Պոլսոյ, Սեբաստիոյ և Գեարսիոյ մէջ, և Ս. Կարապետի Հայկական որբանոցին Հայապատկան շէնքն անգամ դեռտական սեփականութիւն մը կը հռչակուէր: «Հող չէ, կրնաք եորէն Հոս պահել որբերը. բայց պէտք է վարձք վճարէք»...

\* \*

Ոչ-Թուրքերու խաղաղ թրքացման և անոնց Հարստութեանց գրաւման քաղաքականութեան Հետ զուգընթաց, Էնկիւրի կը շարունակէ իր «ճիշտ»ը Թուրք ընդդիմադիրներուն դէմ, որոնք շատոնց ջլատման գաղափարաբան են: Պրտական ապստամբութեան Հաշուեյարգարէն յետոյ, խաբուսիկ մեղմացում մը յառաջ եկաւ Պոլսէն Անատոլիոյ թրւած խմբախիւները, որեւով Տիգրանակերտի կախարհներուն սարսափին տակ ապրելէն յետոյ, փոխադրուեցան Թարքեզ» միշտ ահաբեկ վիճակի մէջ, և առտու մը անպարտ հռչակուեցան, անպատիւ մեղացողի մը ստորագրելով:

Ինչպէս ըսիք, երեւութեան էր այս բարեփոխումը: Թմբակները Պոլիս դարձան իբրեւ փետրաթիվ պառաններ և ալ չեն Համարձակիր քննադատել օրուան իշխանութիւնը,

Հակառակ յուզակի խրատներու: Էնկիւրիի վարիչները զանազան ձեւերով լնդու կը դնեն անոնց բերանը, բայց անոնք իրենց դասը առած են, և ալ չեն փորձուիր հրապարակ դնել երկրին վերքերը: Մասնաւոր որ, իրենց արձակուամէն յետոյ, անկի շեղատեցաւ «Յեղափոխական» Թափը, Հագուստ-կապուստի փոփոխութենէն մինչև Հասարակութեան յանդիմով:

Այս ճամբուն վրայ, առաջին պարտատիկը արձակուեցաւ չորս ճամբով դէմքերու դէմ, Պոլսոյ պակասած երեսփոխաններուն տեղ նորին ղեկավար անթիւ Երկրորդ կարգի ընտրողները, մասնաւոր ազգանշանի մը վրայ, պահանջեցին որ հրամարին Գորակէքիբ Քեաղիմ փաշա (Հայաստանի յաղթածներ, ինչպէս կը կոչեն), Բեհթէֆ փաշա (որ առաջին անգամ Պոլիս մտաւ իբրեւ իրազօր) Բեռնէֆ պէյ (վարչապետ՝ Լօպակի ժողովին ատեն), Ետհան պէյ (Էնկիւրիի արտաքին գործավարութեան ներկայացուցիչը Պոլսոյ մէջ): Անոնք շատոնց սև ցանկը անցած են ճանաչողով պէյի, Սիլ Փուստ փաշայի և ուրիշ շջիբու Հետ, իբրեւ ընդդիմադիր, և կուտակեց միտղիտութեան կամ իթթիշատի: Մահ մասնագրական օրէնքով, երեւոյթան մը այլեւս ամբողջ երկրին կը պատկանէ, և ոչ թէ-աչք կամ այն շրջանին: Այս հիման վրայ թէ ակնարկուած փաշաներն ու պէյները ստուար չեն տեղի տալու. բայց օրուան վարիչները գիտեն զանոնք խեղճ բերելու միջոցները, կը բաւէ որ վճռեն: Առայժմ, կը բաւականանան անոնց Հայրենասիրական գգացումները կասկածի տակ դնելով և զանոնք ամբողջախի գաղափարներն յանձնելով:

Ուշագրաւ է որ, բոլորն ալ խեղճ հասած են առաջիմ, և կը Համակերպին ամէն Հարուածի: Գժուար է ըսել, — ստարութեան նշան է այս պարագան, թէ դիւանադիտութեան: Ամէն պարագայի մէջ, սա ստոյգ է որ Էնկիւրի բաւական ուժ ունի ստղծել մէջ խեղդելու սր է և իրրոսմ. քանի որ կազմ և պատրաստ բանակ մը կը պահէ մասնաւորապէս ներքին ճակատին դէմ, և, ամէն բանէ առաջ, կը հօգայ ու կը կերակրէ քանակը: Միւս կողմէ, անդադար կը մնալ պաշտօնէութիւնը, մասնաւոր Պոլսոյ մէջ, որ պետաւ քաղաք» հռչակուեցաւ, և սօք բոյն գրած են բոլոր դժգոհները: Վերջերս նորէն արտատաղիր քննիչներ դիմուեցան երբեմնի մարքաբաղքը ահաբեկի մատնելով Հին և նոր պաշտօնէաներու բազմութիւնը, որ միշտ անօթի է, և կաշառքով ու գողութեամբ կը իրացնէ ապրուստի պահանջը: Անվերջ փոփոխութիւններ կը կատարուին մասնաւորապէս ստիկանական տեսչութեան մէջ, որուն պատասխանատու վարիչները երբեք չեն գիտեր թէ քանի ամսուան կամ քանի ժամանակ Համար Նշանակուած են:

Այսպէս, անդորմաբար շաշեցնելով մտրակը ներքին ճակատի վրայ, պրկելով ստրուկութեան շղթաները՝ միացած փոքրամասնութեանց Համար, բուռնաբանելով անոնց Հարստութիւնները, արձաբծեց «Թուրքացու թուրք» գրացումները, — Էնկիւրի միևնույն ատեն, չոր կը պահէ իր վառօքը՝ արտաքին ճակատին Համար: Բողոքովին մնամէջ սպառնալիքներ չեն Մուսուլի մասին եղած պահանջները: Այս տեսակէտով, նոր Թուրքերը այնքան վաղպես են և վճռական, որ Ազգերու Դաշնակցութեան ընդհ. ժողովին ատեն անգամ, կցցան դրելու Հանել պահանջները շրջանի ափ մը քրիտամաններուն տե-

դահանութիւնն ու ջարդը. և երբ քննութեան խօսք եղաւ, խորապէս վիրաւորուեցան ու բողոքեցին, թէ Եւրոպա "իրենց ներքին գործերուն կը խառնուի..."

Ջարմանալու բան չկայ այս իրողութեան մէջ, Այս բոլորը հետեւեալն են այն քաղաքականութեան. որուն հիմը դրուեցաւ, 1921 Մարտին, Մոսկուայի մէջ, և որ նուիրագործուեցաւ անկէ յետոյ, Լոյսանի մէջ: Ախորժակը ուսելով կը բացուի: Եստ սուր է Թուրքերու ակորժակը մանաւանդ այս օրերս, երբ Սուրիան խառնակութեան բոցն դարձած է, շնորհիւ իրենց գործօն աջակցութեան Իսթանուլիումն ու Անտիոքը պահանջած ատեն, ահաւասիկ նոր պատեհութիւններ և փայլուն հեռանկարներ կը պարզուին ջարդարներու աչքին նոր չէ որ կը փաստաբանուի թէ Թուրքիան չապրիր առանց Հայկաի կամ Դամասկոսի: Կ'ապրէր առանց Կրետէի կամ Կարտի...

Բայց, չաճապարհնը: Ճակատն կանուխ է, Դամասկոսի ամբողջ ողբերգութեան ծալքերը բանալու և Թուրքիոյ դիտակիցներուն ու բարեկամներուն — երէկուան թշնամիներուն — բոլոր մեղքերը երեսն հանելու համար:

## ՔՐՏԱԿԱՆ ՀԱՐԺՈՒՄԸ

(Սեփական զրոյակցութիւն «Իրաւակի»

Բաղդատ, 6 Հոկտ. 1925

Այժմ, երբ քրտական սպտամբուութիւնն արգէն ձնշած է և թիւթո զեկավարներէն շատերը տարագրւած արտօսահաման, Տնարուոր է բուն իսկ քրտական աղբիւրներէ ներկայացնել քրտական շարժման բովանդակ պատկերը: Ար Կարծենք թէ «Դրօշակ»-ի ընթերցողներու համար հետաքրքրական կըլլան մեր հաղորդելիք տեղեկութիւնները:

Քրտական ներկայ շարժման սկիզբը պէտք է որոնել համաշխարհային պատերազմի օրերուն: Ճիշտ է, դեռ Պալքանեան պատերազմին յետոյ, երբ նորէն գիւտնա գիտական սեղանի վրա դրուեցաւ հայկական հարցը, քրտներու մէջ ևս կազմեցաւ «Քրտախոսանի Անկախութեան կոմիտէ» ծերակուտական Աէլիս Ապտուլ Գասթրի գլխաւորութեամբ և Օսմանեան Խորհրդարանի քրտ երեսփոխաններու մասնակցութեամբ, իր թէ հետապնդելու համար քրտախոսանի անկախութիւնը, սակայն ատիկա յղացում մըն էր իմթիհատական կուռավորութեան և նպատակ ունէր վիժեցնել հայկական բարենորոգումները ու շատ հեւտու էր քրտական շարժումը քլլալէ:

Քրտ ցեղը իր ազիտութեան և զեկավարներու անհասկացողութեան կամ շահամուտութեան պատճառով միշտ ալ կոյր գործիք եղած է թուրքերու ձեռքին, յատկապէս, հայերու դէմ: 1915-ի տեղահանութեանց և աղէտներու ժամանակ ալ թուրքերու օգտագործեցին քրտութիւնը՝ բնաջնջելու համար հայ ժողովուրդը: Երբ, սակայն, հայկական սարըն այլևս չկար և Անտառուի նահանգները պարպւած էին հայերէ, համաթուրանական հայշիւղով արեցած թուրքերը ձեռնարկեցին նաև քրտա-

թեան թլրացման կամ բնաջնջման: Այս քաղաքականութիւնը սուսձնապէս ցայտուն դարձաւ, երբ ուստական յառաջիտացման հետեւեալով Արեւելեան Անտառուի քրտութիւնը թողուց իր սունն ու տեղը և գաղթեց երկրի ներքեր: Գաղթական քրտներն իրենց բնական հրաւուրը կը համարէին տրանալ հայերու թողած գոյքերուն ու տեղաորւիլ անոնց շքած գիւղերու մէջ: Սակայն, կառավարութիւնը անհետախտ կերպով արգիւ չեց քրտներուն կազմել ցեղուն-աշիրէթական և կամ տեղացիական համախմբումներ և տասը ընտանիքէն աւելի սպրիլ մէջ գիւղի մէջ: Ամբողջ քրտ գաղթականութիւնը մասնատուեցաւ, բաժան-բաժան եղաւ ու ոստիկանութեան հսկողութեան տակ՝ յանձնուեցան գուտ թլրարնակ գիւղերու և քաղաքներու մէջ: Նոյն իսկ քրտ զեկավարները տեսան թլրացման այս անքօղմանիկ քաղաքականութիւնը, որուն հետեւեալով սխաւ ծայր տայ գգգոնութիւնը, մանաւանդ քրտ մտաորական ու կղերական խաւերուն մէջ: 1913 թ. դեկտ. 7-ին Տիգրանակերտի մէջ կազմեցաւ «Ազգային Պաշտպանութեան կոմիտէ» մը, որ իր ձեռքն առաւ քրտ ցեղի ազգային ինքնապաշտպանութեան գործը: Ըէլիս Այախորդին գարձաւ այս կազմակերպութեան, որ նպատակ դրաւ թօթափել օսմանեան տրտակութեան լուծը և ստեղծել ազատ քրտախոսան Ապա սխաւ արօպագանտի ու կազմակերպութեան շրջան մը: Յետագայ զեկպերը, մանաւանդ ուստական յեղափոխութիւնն ու Ախլսոնեան նշանարանները, ալ աւելի հրահրեցին քրտներու ազգային զգացումները: Այս պարագան շլրկպեցաւ թուրք վարիշներու ուշադրութիւնէն, սակայն, անոնք՝ պատերազմական վիճակի մէջ ըլլալու պատճառով, չհամարձակեցան կտրուկ միջոցներու դիմել:

1918 թ. օգոտ. 5-12 ին, Խնուսի մէջ, Ըէլիս Այախիտի անը նորէն կը գուտարի քրտ ականաւոր աշիրէթակետերու և շէլիսերու գաղտնի խորհրդաժողով մը, որուն կը մասնակցին 62 պատգամաւորներ: 36 աշիրէթներու կողմէ ժողովը քննութեան կ'առնէ թուրք կուռավորութեան վարած քաղաքականութիւնը քրտներու նկատմամբ, և միաձայնութեամբ հաստատելով Տիգրանակերտի «Ազգային Պաշտպանութեան կոմիտէ»-ի ծրագիրը՝ հետեւեալ կերպով կը ձեւակերպէ քրտական ազգային ծրագիրը: «Մենք լրով քրտ ժողովուրդի կենսական պայմաններէն, և անոր ազգային գոյութեան լուսագոյն ապահովութեան, անտեսական ու մշակութային բարեկարգման հաստատուն քաղաքականութիւնը գտնելով բացառապէս ինքնուրոյն, երաւ ու անկախ պետական կեանքի մէջ, բոլոր միջոցներով ձգտիլ վերականգնելու անկախ քրտախոսանը իր պատմական սահմաններուն մէջ»: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ կը նկատուի կազմակերպել քրտ ազգը և պատրաստուիլ, պատեհութեան թաթախելու և գիտակցութեան բերել քրտ գանգաւանները՝ ապրածելով ու խորացնելով անկախութեան գաղափարը, մասնաւորապէս ձգտելով ընդհանուր միութեան ու բարոյական կապ ստեղծել անջատ-

անըստ աշխրթներու միջև: Կիևոյն ժամանակ անհրաժեշտ կը նկատուի կազմակերպել քրտական հարցի դեւանագիտական պաշտպանութիւնը՝ հիմնելով Պոլսոյ և տրտասահմանի մէջ դիւանագիտական մարմիններ: Այս կընտրուի 10 հոգիոց կենտրոնական մարմին մը — «Քիրտիստանի Անկախութեան Կոմիտէ»ն, որին կը յանձնուի քրտութեան ղեկավարութեան բարձրագոյն իշխանութիւնը: Կոմիտէի անդամ կընտրուին՝ խալըթ բէյ Մահմուտ բէյգասէ (Նախագահ), Իւսուֆ Ջիւա, Քէմալ Ֆէվզի, սողթոր Ֆոււաա, Բանեցի Աբդիւլ Գասէր, Էէննախցի Աբդիւլ Ռահման, խոյթեցի ՖէՏմին, Էէյի Էէրիֆ. Էէյի Ալի Ռիզա և Էէյի Իսմայիլ Կոմիտէն պիտի գործեր Էէյի Սալիտի բարձր հովանաւորութեան ներքեւ և իր կեդրոնատեղին պիտի ունենար Էրզրումը: Ժողովականները կը ցրուին բարձր արմատազրուցութեան տակ և կը ձեռնարկեն աշխատանքի: Էուսով Պոլսոյ մէջ ևս կը կազմուի մարմին մը ծերակուտական Սէյիտ Աբդիւլ Գասէրի գլխաւորութեամբ, որը, սակայն, տարամերժ ինքն իր մէջ, չի կրնար շօշափելի գործունէութիւն ցոյց տալ:

Արայ կը հասնի Գաշնակիցներու յաղթութիւնը, սպա՝ Սեփրի գաշնակիւրը, որը միջազգային ներազործում կուտայ և՛ քրտական պահանջներուն՝ ընդունելով ինքնավար Քիրտիստանի անհրաժեշտութիւնը, որ անհուն խանդավառութիւն առաջ կը բերէ քրտական շրջաններու մէջ: «Անկախութեան Կոմիտէ»ն կը կազմակերպէ քրտական գաւառները և կը դառնայ Քիրտիստանի փաստական իշխանութիւնը: Անոր ձեռք առած միջոցներով Քրտութիւնը գրեթէ չի մասնակցիլ քէմալական շարժումներուն և յոյներու ու հայերու դէմ մշտեալ կռիւներուն: Քիրտիստանը կապիլ թուրքիայի միւս մասերէն տարբեր կեանքով, և թրքական իշխանութիւնը կը դառնայ սոսկ անւանական: Այս պարագան իրստ գրգռութիւն կառաջացնէ քէմալականներու մէջ, որոնք կուստեն առաջին իսկ պատեհ առիթով քրտական վտանգը վերցնել մէջուղէն: Առիթը չուշանար: Լոզանի գաշնակիւրը և բոլշեփիներու բարեկամութիւնը կարձակեն թուրք ղեկավարներու ձեռքերը, և ծայր կուտան խստութիւններ քերտերու վերաբերմամբ: Բանտերը կը լեցնեն հազարաւոր քերտերով: Ար մտցնին անտանելի սուղքեր, տարապարհակ աշխատանք: Ար ծրագրի տքնտեսապէս քայքայել ու բարոյապէս գլխատել քերտ ժողովուրդը: Մէկը միւսի ետեւէն ննջող գաւերու գոհ կ'երթան բազմութիւ շէյխեր ու ցեղապետներ: Տիրաւորներու, խնուս, Բիթլիս և ուրիշ տեղեր կըսկսին գործել կախազաններ: Գաւազորօրէն կը բռնուին ու կը կախուին «Անկախութեան կոմիտէ»ի անդամները՝ խալըթ բէյ Մահմուտ բէյգասէ, Իւսուֆ Ջիւա, Քէմալ Ֆէվզի, սորթ. Ֆոււաա, Բանեցի Աբդիւլ Գասէր, Էէննախցի Աբդիւլ Ռահման և ուրիշներ: Թիւրքերը կորոշան կըտրուի և արագ հարւածով վերջ տալ քրտական շարժման:

Քիրտերը յանկարծակիլ եկած կը փութան ինքնապաշտպանութեան միջոցներ խորհիլ: 1924 թ. նոյեմբ. բեր 3-ին, Էէյի Սալիտի նախաձեռնութեամբ քերտ

զինուորականներու խորհրդաժողով մը կը գումարել Կէօյնիկի մէջ: Ար մասնակցին 24 հոգի — ամենքն ալ թրքական բանակի պատրաստած ու փորձառու զինուորականներ: Օրակարգի միակ կէտը սպասամբութեան հարցն է: Ար պարզի, որ թիւրք կառավարութեան վարած դաժան քաղաքականութեան հետեւանքով անկարելի է խուսափիլ սպասամբութենէն, որ ժողովուրդի կամքէն անկախ պիտի բռնուի: Ար պարզի նաև, որ քրտական ուժերը բաւական են թիւրք զորքերը պարտութեան մատնելու համար, բայց ռազմավարքի պակասի պատճառով անհնար կը լինի երկար դիմանալ Կորուշի դիմումները կատարել զրոյի ուժերու, և այս նպատակով Էէյի Ալի Ռիզա կը մեկնի Պոլս, սակայն իր դիմումները զրկան յարգիւնք չեն տար, և ղեկու 30ին ձեռնուռնայն ու հրաշմարտ և կը վերադառնայ, Ապարդիւն կանցնին և բոլշեփիներուն եղած դիմումները անոնք խորհուրդ կուտան հանդարտ կենալ թուրքերու հանդէպ և պատրաստել «Կարմիր Քիրտիստան» ստեղծելու համար: Կիմացի նաև, որ Թիֆլիս կը գլտնուի Պէտերիսանդասէներէն մէկը, որ բոլշեփիներու ղեկավարութեամբ՝ կ'աշխատի յօգուտ խորհրդային Քիրտիստանի:

Մինչ տեղի կ'ունենային այս բանակցութիւնները, քէմալականները ա՛յ աւելի կը խտացնեն իրենց վայրագութիւնները: Տեղի կուենան նորանոր բանտարկութիւններ, կը շատնան կախազանները: Գաւազորութեամբ կը սպանուի քերտերու մէջ մեծ համբառ ունեցող ու սիրած Բոմանցի Աբդիւլ Ռահման աղան, յայտնի «Աղայեսոր»ը: Գեկանմբի վերջերուն ինուս կը հասնի Էրզրումի վայրին 200 ձիւտը ու հետեւալ զինուորներով Էէյի Սալիտը ձերբակալուելու դիտարկութեամբ: Ամեն կողմէ օգնութեան կը փութան քերտ զինուոր խմբեր: Այլին վախցած՝ գործը կը կապէ անուշի ու կը հետանայ Սակայն, այլևս անհնար կըլլայ հանդարտեցնել յուզած քրտութիւնը: Խարբերդէն ու Ջաբաղուրէն պատգամաւորներ կուգան խնդրելու, որ Էէյի Սալիտ մեկնի իրենց շրջանները և տայ պատասմբութեան ազանշան: Գեկանմբեր 25-ին Էէյիւր, հազար ձիւտորներու հետ կը մեկնի Թաքման և Էուշար-Կէօյնուկ-Ջաբաղուր-Բալու գծով կը հասնի Փիրան: Զանապարհին քերտ ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ցոյց կուտայ Էէյիին ու կ'երգնու մինչև արեան վերջին կաթիլը կը սրտապնդէ ժողովուրդը և կուտայ հրահրանքներ: 1925 թ. փետր. 4-ին կը հասնի Փիրան Կառավարութիւնը ճանապարհին քանի մը անգամ կը փորձէ ձերբակալել կամ սպաննել Էէյիւր, բայց չի յաջողիր:

Փետր. 5-ի յուսարացին Փիրանը կը պաշարել թիւրք 250 ձիւտը ու 150 հետեւակ զորամասով, որպէսզի ձերբակալել ու Տիրաւորներու փոխադրէ Էէյի Աբդիւլ Ռահմանը: Ժողովուրդը կը դիմադրէ: Զօրամասը թնդանութի կը բռնէ գիւղը: Ար սկսի տաք կռիւ, որ կը սեւեւ մէկ ժամ: Թիւրք զորքը ջարդած ու ծանր կորուստներ

տալով՝ կը դիմէ փախուստի Այս կոնքը կը դառնայ ազգանշան ընդհանուր պատմութեան: Արիւն թափած էր և տղեւս կարելի չէր վարանել: Ըէյի Սայիտ կանցի գործի:

Առանձին հրովարտակով ֆիւրստանը կը յայտարարէ անկախ Ապա, յատուկ սուրհանգակներու միոնցով, ապստամբութեան հրաման կուղարկէ բոլոր աշիւթներուն: Կը հրահանգէ տապալել թիքական իշխանութիւնը և տեղը ստեղծել քրտական ազգային վարչութիւն: Աէց որ շարունակ կը կատարէին նախապատրաստական աշխատանքները կը հրատարակէին բազմաթիւ կոչեր ու թուոցիկներ: Մինչև փետր. 7-ը՝ շրջակայ գիւղերէն և հարեւան շրջաններէն փերան կը հասնին մօտ 7000 զինուած քիւրտներ: Կը կատարէին զինուորական դասուորակներ, կը նշանակէին հրամանատարներ, կը բռնէին ճակատներ: Արևմտեան ճակատի պես կը նշանակէի Ըէյի Ըէրիֆը, օգնական՝ Ըէյի Հասան: Արևելեան ճակատի պես՝ Ըէյի Արգուլլահ, օգնական՝ Ըէյի Մուստաֆա, Հիւսիսային ճակատի պես՝ Ըէյի Աի Ռիզա, օգնականներ՝ Ջիւրլանցի Բարա և Հասանցի Խալիլը: Ըէյի Ըէրիֆը, Հարաւային ճակատի զեկավարութիւնը քաղաքական նկատուածներով, կըստանձնէ ինքը՝ Ըէյի Սայիտ՝ հանրապետութիւն միաժամանակ և կառավարութեան գլուխ ու զերագոյն հրամանատար: Իր օգնականներն էին Ըէյի Ըէմէտտին, Ըէյի Խամայիլ, Ըէյի Արզիւլ Ռահիմ և Ըէյի Ֆարիտտարին: Կինձը կը յայտարարէ քիւրտ կառավարութեան ժամանակաւոր կեդրոնատեղի փետր. 11-ին, զօրքի և բազմահազար ժողովուրդի ներկայութեան, Սէյի Սայիտ կը կատարէ հրապարակային մաղթանք և ժամը 11-ին կուտայ ընդհանուր զօրաբարձի հրաման:

Տեղը չի ներքը մեզ ներկայացնելու պատերազմական գործողութեանց բոլոր մանրամասնութիւնները, որոնք եղած են բուն ու արևնալի յրկուստեք ընկած են բազմաթիւ զոհեր և երկիր քանուած է աւերի ու աւարի: Կոնքը մասնաւորապէս բուն ելած են հարաւային և արևմտեան ճակատներուն վրայ: Հարաւային զօրամասը երկու օրուան մէջ կը գրաւէ Հանի, Ֆիս, Լճէ, Չիլիլի, ՄէՏէպեան և Կինձ: Փետր. 14-ին թիւրքական մէկ զօրամաս Արղընը Մասէնի վրայով, կը յարձակի հարաւի թիկունքէն ու կը գրաւէ Փերան ու Հանին և կը սպանայ Կինձին: Հանիէն արևելք, բաց դարձի մը վրայ, տեղի կունենայ վճռական ճակատամարտ, և թիւրքերը պարտուած՝ խուճապահար կը փախչին ու կը հետապնդւին մինչև Կիզին, որ կանցի քիւրտերու ձեռքը և կապահարէ անոնց թիկունքը խորքերի կողմէն: Ապա կը սկսի սրնթաց յառաջխաղացում գէպի Տիգրանակերտ և վերջինն արևնոտ պաշարումը: Քիւրտերու ձեռքը կանցնին 13 թնդանօթ, 34 զնդացիր, 1300 հրացան, 140,000 փամիշուր, 470 ձի, 120 շորի և այլ աւար: Թնդանօթներն ու զնդացիրները գործածողներու չգոյութեան պատճառով կը կեդրոնացնեն Կինձ: Փետր. 21-ին կը սկսի Տիգրանակերտի պաշարումը և

չորս օրուայ կատաղի ու արևնոտ յարձակումներէ ետք, քաղաքը կառնի ամուր օջախի մէջ, իսկ գլխաւոր ուժերը կը շտապի գէպի հարաւ և մարտի 16-ին, Մարտինի գրաւումով, ամբողջ հարաւակողմը կընեն քրտերու ձեռքը, որոնք յոյս ունեն կապել Ֆրանսացիներու կամ անգլիացիներու հետ և ստանալ նազմութիւնը, որուն կարիքը շատ մեծ էր:

Ըստ յաղոց կը զարգանան և արևմտեան զօրամասի շարժողութիւնները Ըէյի Ըէրիֆի գլխաւորութեամբ: Փետր 16 կը սկսի յառաջխաղացումը և մինչև փետր. 17 կը գրաւեն Երաբղուր, Խոշնթ, Կապան Մասէն, Բալու և Փերի: Քրտերու ձեռքը կանցնին 1200 գոբի, 12 թնդանօթ, 32 զնդացիր, 170 հրացան, 500 ձի, 317 շորի, 44 ուղտ և այլ աւար: Փետր 24-ին կը գրաւէ ֆիշու Փետր. 26-ին, գիշերային կատաղի յարձակումով կը գրաւի Խարբերգ, ուր քիւրտերը գերի կառնեն 700 զինուոր, 17 սպայ, 3 թնդանօթ, 14 գնդացիր, 160 արկղ փամիշուր, 400 հրացան, 70 շորի և այլն: Այստեղ իշխանութիւնը կազմակերպելէ վերջ՝ Ըէյի Ըէրիֆ կը շարունակէ արշաւանքը և մարտի 22ին կը գրաւէ Մալաթիան, Կապան Մասէնը, Չմիկածազը, Խոզաթը, Արաբկիրը և Անիը, որը կը հանդիսանայ արևմտեան զօրամասի գլխամաս վերջին կայանը:

Միւս երկու ճակատներու վրայ գործողութիւնները աւելի մեղմ կըլլան: Քիւրտերը փետր. 20-մարտ 8ը կը գրաւեն Գէօյնուկը, Գիւմրիքը, Կոփն ու Մանազ կերտը: Մարտի 9-ին տաք Կոնքի տեղի կունենան Խնուս, և երկու կողմերը կունենան ծանր կորուստներ: Մարտ 10-ին Խնուսը կընկնի քիւրտերուն ձեռքը: Քիւրտերու ձեռքը կանցնին Խաւ Մուշն ու Մասուշը: Այսպիսով, մինչև մարտի վերջերը քիւրտերը տէր կը դառնան Մարտինէն մինչև Խնուս և Անիէն մինչև Մասուս ամբողջ տարածութեան, որ բոլորովին կը մաքրի թիւրքերէ և կանցնի քրտական իշխանութեան տակ: Պատերազմական գործողութիւնները կը կանգնին, որովհետեւ քիւրտերը մեծ նեղութիւն կը քաշեն փամիշուրի և յոյս ունին Սիւրիոյ Ֆրանսական իշխանութիւններու և Իրագի անգլիացիներու հետ բանակցելով ստանալ Սա. կայն, շարաթը ուրբաթէն շուտ կուգայ: Թիւրքերը կեդրոնացնելով Խոջոր ուժեր՝ հիւսիսէն ու հարաւէն կը զիմն ընդհանուր յարձակման աւելի քան 50,000 զինուած ուժերով, թնդանօթներով, զրահապատ ինքնաշարժներով ու սաւառանկներով եւ, որ աւելի սարսուփելին է, շուտով յայտնի կըլլայ, որ թիւրքերը զօրքեր կեդրոնացուցած են՝ օգնութեամբ այն Ֆրանսացիներու, որոնք հետ այնքան յոյսեր էին կապած քիւրտերը:

Առաջին բաղադրանքները տեղի կունենան մարտի 26ին: Ազգրանկան յաղոցութիւնը կը լինի քիւրտերու կողմը, սակայն փամիշուրի պակասը շուտով գերակշռութիւնը կուտայ թիւրքերուն, և քիւրտերը կը դիմեն նահանջի մինչև Տիգրանակերտի պատերուն տակ: Այստեղ ստանալով օգնութիւն, անոնք կամրանան: Սէյրան Թէփէի ուղղութեամբ, ուր ութ օր շարունակ տեղի կունենան

կատարի կոնկրետ թնաման կը յաջողի անցնիլ թիկունքը, և քիւրտերը խուճապով յետ կը քաշին: Պատասխանաւ գործիչներէ ու ղեկավարներէ բաղկացած ձեւուոր խումբ մը Շէյխ Սայիտի գլխաւորութեամբ կուզէի դէպի Տիւսիս, բայց Տագարապետ Գասըմ բէիի դաւաճանութեամբ կիյնայ թշնամու ձեռքը:

Մէկը միւսի ետեւէն Տաշեարդարի կենթարկին և միւս ձակասները, որոնք նոյնպէս փամփուռտի պակասի պատճառով ստիպուած են դիմել նախանշին Ետտերը գերի կիյնան թիւրքերու ձեռքը ու կը կոտորին: Ամանք կը յաջողն փախիլ դէպի Պարսկաստան, իսկ 350 Տոգիւնց ձիւուոր խումբ մը Մասիսի փէշերով կը մտնէ Լայաստան: Պարսկաստան մտնողները սահմանի վրայ ընդհարում կունենան պարսիկ սահմանապահներու հետ և երկուստեք կը լլան սպաննութիւններ, 45 Տոգի գերի բռնելով կը տարին Թաւրիկի բանար: Միւսները կը ցրին լեռները կամ կապաստանին Սվօի մօտ՝ ճառա: Թիւրք զօրքերը անցնելով Տարուէն Տիւսիս ու արեւմուտքէն արեւելք՝ անլուր բարբարոսութիւններ կը գործեն քրտական շրջաններու մէջ գիւղերը կաւերին, կը թալանին ու կը Տրեհէին: Ետի ու երեխայ սրի կը քաշին: Ահիներ կը բռնաբարին ու գերի կը տարին: Երիտասարդութիւնը կը բանտարկի ու կը կոտորի: Լայական սարսափներ կը կրկնին իրենց բոլոր մարմաննութիւններով: Թիւրքերը արիւնով ու երկաթով կը ճնշեն քրտական ապստամբութիւնը: Զափազանց մեծ կը ըլլան թիւրքերու կորուստները: Քիւրտերն եւս չեն խնայած իրենց ձեռքը ընկած թշնամուսն...

Այսպէս վերջացաւ քրտական շարժման առաջին գործողութիւնը: Ապստամբութիւնը ճնշած է, բայց քիւրտերու դիմադրական ոգին չէ սպաննուած: Ընդհակառակը, թափուած արիւնը ա՛յլ աւելի խորացուցած է թիւրքերու և քիւրտերու միջև բացւած վիճը, ա՛յլ աւելի գրգռած ու վրէժով լեցուցած քիւրտերը: Քիւրտիստանի գանազան կողմերը դեռ կը մնան ապստամբ օձախներ, որ չի հասնիր թրքական ղեկքը: Էքսթրեմիստներ կը շարունակէ ապրիլ ըմբոս՝ Աբդուլ Գաստերի որդի Շէյխ Սէյիտ Աբդուլլահի գլխաւորութեամբ: Անոր ձեռքն է և Շեմտինան-Շապաթանի շէյխը: Չէ նաճւած և Սղերթ-Իթիլիսի շրջանը, որու փաստական տէրն է Շէյխ Սայա-հէտիւնը՝ պատերազմէն առաջ Բիթլիսի մէջ կախազան հանուած Սէյիտ Ալիի տղան: Թրքական տիրապետութենէն դուրս է և Մուշ-Սասունը, ուր կիշխէ Լաճի Մուսա բէկի եղբայրը՝ Նուհ բէյը:

Ասոնցմէ գառ կան և ուրիշ ցեղապետներ, որոնք չեն ձանձնար թրքական իշխանութիւնը և կը շարունակեն պալքարիլ անոր դէմ Այդ ուղղութեամբ կողխատին և արտասահման ապաստանած քիւրտ գործիչները, որոնք ամենքը լեցւած են վրէժի ու թշնամանքի անհաշտ զգացումով դէպի թիւրքերը:

Այս է գրութիւնը: Քիւրտերը պարտուած են, բայց չեն ընկճւած, չեն համակերպուած: Քիւրտիստանի ազատութիւնը այլևս ունի իր զոհներն ու նահատակները, ունի իր հերոսները: Լազարաւոր դիակներ, խարոյկ զարձած գիւղեր, արեան գետեր ու անհաշիւ կիսաղաններ — ահա այն սարսափելի անշղթայեր, որ այսուհետեւ կը բաժնէ թիւրք և քիւրտ ժողովուրդները: Աերազարձ չկայ: Ահանքը իր երկաթէ օրէնքներով պէտք է մղէ քիւրտերը դէպի անողք կուռ ընդդէմ թիւրք բանակալութեան և յօգուտ քիւրտիստանի ապստամբան ու անկախութեան:

ԿՈՒՍԱԿԱՅԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հ. Յ. Բաշնակցութեան Պալքանի 19-րդ Շրջանային Ժողովը գումարուեցաւ Օդսսա. 24-ին Սօֆիայի մէջ և աւարտեց իր աշխատանքները Սեպտ. 1-ին: Ներկայ էին 12 պատգամաւորներ, ինչպէս նաև խորհրդակցական ձայնով հրաւիրուած ընկերներ: Որոշ հարցերու քննութեան մասնակցեցան նաև պուլկարահայ թեմական համագումարի առթիւ Սօֆիա հասած շրջանի թաղական-հոգաբարձութեանց անդամ ընկերները: Ժողովի աշխատանքները անցան առհասարակ յաջող: Պուլկարահայ թեմական համագումարի, մամուլի, նոր սերունդի կուսակցական դաստիարակութեան, Կենտր. Կոմիտէի և շրջանի մարմիններու գործունէութեան ու հաշիւներու, «Լալաստան» թերթի և կազմ մը ուրիշ հարցերու մասին: Ի վերջոյ, ժողովը կազմեց յաջորդ շրջանի գործունէութեան նախահաշիւն և ընտրեց կենտր. կոմիտէի նոր կազմ: Աւելորդ չենք համարիր առաջ բերիլ որոշումներէն մէկ քանին:

Շրջանային ժողովը մանրամասնօրէն դատեցաւ հայ գաղթականութեան վիճակով Պուլկարայի մէջ և նկատելով որ ազգայնական ու տնտեսական պատճառով տեղ-տեղ կը յարուցին փոխարկիւններ՝ որոշեց ձեռք առնել բոլոր ներաւար միջոցները պահելու համար Պուլկարայի մէջ հայ գան. կառններու ինքնուրոյն գոյութիւնը և միջոցներ մտածել չեզոքացնելու համար այս ու այն շրջանի մէջ հայ աշխատուոր ու բանուոր տարբերու դէմ ծրագրուած արհեստակցական հարմանքները:

Ժողովը քննեց նաև Պուլկարահայ թեմի կազմակերպման և թեմական համագումարի հարցը: Այս առթիւ որոշեց ջանալ հրաւիրելու Պուլկարահայ թեմական խորհուրդներու օրինակուր համագումար՝ կանոնադրութեան կիցներու վրա և, առհասարակ, աշխատիլ վերջ տալու այն քառասյին վիճակին, որու մէջ կը գտնուին այժմ Պուլկարահայ ազգային-թեմական գործերը:

Պալքանի դաշնակցական երիտասարդութեան կուսակցական դաստիարակութիւնը և կազմակերպումը դարձնելով օրւայ մտահոգութեան առարկայ՝ որոշուեցան նոր տարիքըս-

ինն այս գործը նկատել մարմիններու և գործիչներու պիտաւոր պարտականութիւններէն մէկը:

Նկատելով, որ պուլար օրաթերթերու և կուտակցական պաշտօնատնային օրգաններու մէջ երեւոյզ Հակահայ արտայայտութիւնները որոշ ազդեցութիւն կ'ընեն Հնարահետէ պուլար կուտակարական և ժողովրդական շրջանակներու վրա և աջի առջև ունենալով, որ Հակառակ մեր անցեալի զոհողութիւններուն և պուլար ժողովրդի Հետ ունեցած բարոյական արտաքին կապերու ցարդ կարելի չէ եղած ամբապնդել երկու ժողովուրդներու բարեկամութիւնը, Երջ. Ժողովը որոշեց աշխատի օգտագործելու ամեն միջոց պայքարելու Համար երկու ժողովուրդներ իրարմէ վանող երեւութիւններու դէմ և առանձնապէս ջանալ յուսարանել Հանրային կարծիքը մամուլի և այլ միջոցներով: Այս ուզողութեամբ եղան յատուկ թեւադրութիւններ կենտրոնական և շրջանային մարմիններուն:

Ճնշելով կազմակերպական խնդիրներուն՝ Երջ. Ժողովը մանրակերէն քննութեան ենթարկեց կենտրոնական կոմիտէի և շրջանային մարմիններու միամտաց գործունէութիւնը: Կենտր. կոմիտէի գործունէութեան առթիւ առանձնապէս շեշտեցու բանաւոր պրօպագանդի անսեսուճը և գործավարութեան թուլութիւնը, որով կենտր. կոմիտէն չէ կրցած արդարացի նախորդ Երթ. Ժողովի իր վրա դրած յոյսերը: Ընդհանրապէս գոհացուցիչ չէ եղած և շրջանի մարմիններու գործունէութիւնը. անսեսուած է պրօպագանդը զարթոյցանութեան ու նորահաս սերունդի մէջ:

Երջ. Ժողովը նկատի առաւ նաև Ֆիլիպիի ընկերներէն Տոբթ. Վահան Հապէշեանի պարագան, որ տեղւոյն ազգային վարժարանի մէջ իր ունեցած պաշտօնն ու դիրքը ամբապնդելու Համար ջանացած էր կաշառքով ձեռք ձգել կուտակցական ներքին շրջաբերականները Հակազանակցական հոգաբարձութեան տրամադրելու Համար: Ժողովը կարողով Հապէշեանի կողմէ իրեն ուղղած չքմեղանքը և քննելով խընդիրը իր ամբողջական փութելուն մէջ՝ Հաստատեց Կենտր. Կոմիտէի առած որոշումը՝ վտարել սօքթ. Վ. Հապէշեանը Դաշնակցութեան շարքերէն:

Հ. Յ. Դ. Եւրոպայի 3-րդ Երջանային Ժողովը

Սեպտ. 26-28 Փարիզի մէջ տեղի ունեցաւ Հ.Պ. Դ. Եւրոպայի 3-րդ Երջանային Ժողովը: Պատգամաւորներ կը մասնակցէին Փարիզի, Մարսիլիայ, Լիոնի Երջանային Կոմիտէներէն, Քաթեյ Սարազէնի, Տէբազվիլի Ենթակոմիտէներէն, Պրիւսէի և Պերլինի Կոմիտէներէն, Եւրոպայի Ուս. Միութիւնէն և Հ. Յ. Դ. Բիւրոյէն:

Մարմիններու և շրջաններու զեկուցումներէն պարզուցաւ, որ բոլոր Հայաբնակ վայրերու մէջ սկսած է կուտակցական եռուն աշխատանք. վերջին քանի մը ամսուայ ընթացքին կազմակերպուած ընկերներու թիւը եռապատկուած է և երթալով աւելի կը մեծնայ: Երջանային Ժողովը նկատի առնելով կազմակերպութեան ծաւալումը՝ Նախկին Մեկուսի Կոմիտէութիւնը վերածեց Կենտրոնական Կոմիտէութեան:

Կազմակերպական տեսակէտով Յրանսան քաժնուցաւ

վեց շրջաններու, որոնք պիտի ունենան իրենց շրջանային կոմիտէները: Այդ շրջաններն են Փարիզ, Լիոն, Ս. Շամուս, Վալան, Մարսիլիա և Քուլուզ. Եւրոպայի միւս երկիրները, ուր Դաշնակցական կազմակերպութիւններ կան, առանձին միաւորներ կը կազմեն Անգլիա, Պիժիքա, Գերմանիա, Չեխոսլովակիա, Աւստրիա, Լեհաստան, Սերպիա, Իտալիա և Ջուրջերիտ: Կոմիտէութեան մէջ կը մտնէ նաև Եւրոպայի Դաշնակցական Ուսանողական Միութիւնը:

Երջ. Ժողովը զուս կազմակերպական աշխատանքներէն զատ (զեկուցումներ, ներքին կոմիտեայրի մշակում, պիտանէ, մարմին ընտրութիւն և այլն) լաշնօրէն զբարեցաւ նաև Եւրոպայի Հայ ազգային կեանքի Հետ առնչութիւն ունեցող խնդիրներով: Առանձին ուշադրութեամբ քննուցեան՝ Եւրոպայի ազգային Հանրային կազմակերպութիւնները և մեր դերը երիտասարդ սերնդի կուտակցական-բարոյական դաստիարակութեան Հարցերը: Երջանային Ժողովը նկատի ունենալով որ զաղութիւններու ազգային կեանքի կազմակերպումը և մասազ սերնդի դաստիարակութիւնը լաւագոյն միջոցներն են այլասերման և օտարգրման վտանգի դէմ պայքարելու Համար, որոնց գործնապէս մասնակցել ազգային օրէնսդիր ու վարչական մարմիններուն և միջոցներ ձեռք առնել պատանակութիւնն ու երիտասարդութիւնը կազմակերպելու Համար:

Ա Ր Տ Ա Ք Ս Ո Ւ Մ

Հ. Յ. Դաշնակցութեան Պալմանի 19-րդ Երջանային Ժողովին որոշումով. կուտակցութեան արտաքուստ է Տօդ. Վանան Հապէշեան:

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Ե

ԴՐՕՇԱԿի բաժանողագրութեան պայմանները

Յրանս, Սիւրիա և Եւրոպական երկիրներ սարեկան 20 Ժ. Անթիվա, Անգլիա, Սփանիա և ուրիշ երկիրներ » 2 օտար

"Դրօշակ" յի խմբագրութեան վերաբերեալ նախկին քերթ, գիրք եւ անկէ սնասկ նիւթ ուղարկել հետեւեալ հասցիին՝

S. Hagopian, 6 Av. de Sully  
Chaville (S. et O.)

Դրանները եւ վարչական նախկինները ուղարկել  
S. Ter-Tovmassian  
3, rue Lesage, Paris (20) France

Le Gérant : E. BUAT

Impr. Nercés, 65, Rue Pascal — Paris 13°